266.1
BAR
1865

ON31474



ՊԱՔՏԷԶ

ՀՈԳԵՒՈՐ

ՏՊԱԳՐԵԱԼ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Տ. Տ. ՄԱՏԹԷՈՍԻ ԸՍՏՈՒՆԱԾՆՈՒՐ
ՀԱՅՈՑ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ

ՍՐԲՈՑ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ Տ. ՆԱՀԱՊԵՏԻՆ
ԵՐԱՆԵԼԻԱՆՑՈՑ

ՀՐԱՏԱՆԱԿ

Տ. ՊՕՂՈՍԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ
ԵՒ ՊԵՏՐՈՒՊՈԼԻՍ ՀՈՍՏԱՆՏՆՈՒՊՈԼԻ,

Վ. ՊՕԼԻՍ ՎԻՋԻՐ-ԽԱՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ Թ. ՏԻՎԻԹՅԵԱՆ

— 1865 —



ԱՂՕԹՔ ԱՅԱՒՕՏԵԱՆ

ԻՐԱՔԱՆՉԻՒՐ ԱՒՈՒՐ

ՅԱՆՈՒՆ ՀՕՐ ՆԻ ՈՐԴՒՈՑ
ՆԻ ՀՈԳՒՈՅՆ ՍՐՏՈՑ ԱՄԻՆ

Հայր մեր որ յերկինս, սուրբ եղիցի անուն քո. եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի. զՀաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր. Թող մեզ զպարտիս մեր՝ որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց. և մի՛ տանիր զմեզ

'ի միտձուԹիւն · այլ միըն-
կեաւ զմեզ 'ի չարէ · զի քո
է արքայուԹիւն և զօրու-
Թիւն և փառք յաւիտեանս
յաւիտենից , ամէն :

Տէր՝ եԹէ զշնԹունս իմ
բանաս , բերան իմ երգես-
ցէ զօրհնուԹիւնս քո :
Տէր՝ եԹէ զշնԹունս իմ
բանաս , բերան իմ երգես-
ցէ զօրհնուԹիւնս քո :
Օրհնեալ համագոյ և միաս-
նական անբաժանելի սուրբ

երրորդութիւն՝ Հայր և
Որդի և Հոգի սուրբ այժմ
և միշտ և յաւիտեանս յա-
ւիտենից , ամէն :

Տէր՝ զի՞ բազում եղեն
նեղիչք իմ , և բազումք
յարեան ՚ի վերայ իմ :
Բազումք ասէին զանձնէ
իմմէ , թէ չի՛ք փրկութիւն
սորա առ աստուած իւր :
Ո՛յլ դու տէր օգնական
իմ ես , փառք իմ և բարձ-
րացուցիչ գլխոյ իմոյ :
Ձայնիւ իմով ես առ տէր
կարդացի , և լուաւ ինձ ՚ի

լեռնէ սրբոյ Իւրմէ։
Ես ննջեցի և՛ ի քուն եղէ.
զարթեայ և տէր ընդու-
նելի իմ է։
Ոչ երկեայց ես՝ ի բիւրա-
ւոր զօրաց նոցա, որք շուր-
ջանակի պատեալ պաշա-
րեալ պահէին զիս։
Ելի՛ տէր և փրկեա զիս
աստուածդ իմ, զի դու հա-
րեր զամենեսեան որք էին
ընդիս թշնամութեամբ՝ ի
տարապարտուց և զատա-
մուն մեղաւորաց փշրեա-
ցես։
Տեառնդ է փրկութիւն՝ ի

վերայ ժողովրդեան քո օրհնութիւն քո։

Տէր աստուած փրկութեան իմոյ, ի տուէ կարդացի և գիշերի առաջի քո։

Մտցեն աղօթք իմ առաջի քո տէր, խոնարհեսցի ունկն քո ի խնդրուածս իմ։

Օ՛ի լցաւ չարչարանօք անձն իմ, և կեանք իմ ի դժոխս մերձեցան, և համարեցայ ես ընդ այնոսիկ որք իջանեն ի գուբս։

Եղէ ես որպէս մարդ առանց օգնականի, և ի մեռեալս ազատ։

Որպէս զվիրաւորս , որք
ննջեն ՚ի գերեզմանս :
Զորս դու ոչ յիշեցեր ,
նոքա ՚ի ձեռանէ քումմէ
մերժեցան :
Եդին զիս ՚ի գբի ներքո-
նումն , ՚ի խաւարի և ՚ի ըս-
տուերս մահու :
Յիս հասատատեցաւ սըրտ-
մտութիւն քո , զամենայն
զբօսանս քո ածեր ՚ի վերայ
իմ :
Հեռի արարեր յինէն զգ
ծանօթս իմ , և եդին զիս
նշաւակ իւրեանց :
Մատնեցայ և ոչ ելանէի ,

աչք իմ տկարացան յաղ-
քատութենէ ։
Ընդունակեցի առ տէր զօր-
հանապազ , և համբարձի
առ քեզ զձեռս իմ ։
Ար թէ մեռելոց առնիցես
զսքանչելիս քո , կամ բժ-
ժիշկք յարուցեալ խոստո-
վան առնիցին առ քեզ ։
Ար թէ պատմեսցէ ոք երե-
քէք ի գերեզմանի զողորմ-
ութիւնս քո , կամ զճշմ-
արտութիւնս քո ի կորըս-
տեան ։
Ար թէ ճանաչեսցի՞ն ի խա-
ւարի սքանչելիք քո , կամ

արդարութիւն քո յերկիր
մոռացեալ։
Ես առ քեզ տէր աղաղա-
կեցի, առաւօտու աղօթք
իմ ժամանեսցեն առ քեզ։
Ընդէր տէր մերժես զանձն
իմ, կամ դարձուցանես զե-
րեսս քո յինէն։
Տնանկ և վաստակաւոր եմ
ես 'ի մանկութենէ իմմէ,
'ի բարձրութենէն խոնար-
հեցայ և ափշեցայ։
Յիս հասատաւեցաւ բար-
կութիւն քո, արհաւիրք
քո խռովեցուցին զիս։
Ընկեցան զինեւ ողողեալ ջուր,

զօր ամենայն պաշարեցին
զիս ՚ի միասին։
Ձեռի արարեր զիս ինձէն զՂ
բարեկամս իմ և զծանօթս
իմ՝ վասն թշուառութեան
իմոյ։
Որհնեա անձն իմ զտէր,
և ամենայն ոսկերք իմ զա-
նուն սուրբ նորա։
Որհնեա անձն իմ զտէր,
և մի՛ մոռանար զամենայն
տուրս նորա։
Ո քաւէ զմեղս քո, բժըշ-
կէ զամենայն հիւանդու-
թիւնս քո։
Ո փրկէ յապականութենէ

կ'կեանս քո, պսակէ զքեզ
ողորմութեամբ և գթու-
թեամբ։
Ո՛ւր ինչ ի բարութենէ ըզ
ցանկութիւն քո նորոգես-
ցի որպէս արծուոյ ման-
կութիւն քո։
Առնէ ողորմութիւնս տէր,
և իրաւունս ամենայն զըր-
կելոց։
Ներցէ տէր զձանապարհս
իւր մուխսի, և որդւոցն
Իսրայէլի կամս իւր։
Գթած ողորմած է տէր,
երկայնամիտ և բազում-
ողորմ։

Ոչ իսպառ բարկանայ մեզ տէր, և ոչ յաւիտեան պահէ ոխս։

Ոչ ըստ մեղաց մերոց արար մեզ տէր, և ոչ ըստ անօրէնութեան մերում հատոյց մեզ։

Քանզի որպէս բարձր են երկինք յերկրէ, այնպէս զօրացոյց տէր զողորմութիւն իւր ՚ի վերայ երկիւղածաց իւրոց։

Որչափ հեռի են արևելք յարևմտից, այնչափ հեռի արար ՚ի մէնջ զանօրէնութիւնս մեր։

Որպէս գթայ Հայր ի վե-
րայ որդւոց իւրոց , այն-
պէս գթասցի տէր յեր-
կիւղածս իւր։
Օ՛ի նա գիտաց զստեղծ-
ուածս իւր և յիշեաց թէ
հող եմք։
Մարդոյ որպէս խոտոյ են
աւուրք իւր , որպէս ծաղիկ
վայրի այնպէս ծաղկի։
Ընդ ի նմա հողմ և ոչ է ,
և ոչ ևս երևի տեղի նորա։
Ապա ողորմութիւն տեառն
ընդ յաւիտեանս յաւի-
տենից ի վերայ երկիւղա-
ծաց իւրոց , և արդարու-

թիւն նորա յորդւոց մինչև յորդիս։

Ոյք պահեն զուխտս նորա, յիշեն զպատուիրանս նորա և առնեն զնա։

Տէր յերկինս պատրաստեաց զաթոռ իւր, արքայութիւն նորա ամենեցուն տիրէ։

Օրհնեցէք զտէր ամենայն հրեշտակք նորա, հզօրք զօրութեամբ՝ որք առնէք զբան նորա՝ ի լսել ձայնի պատգամաց նորա։

Օրհնեցէք զտէր ամենայն զօրութիւնք նորա, պաշտօնեայք և արարողք կա-

մաց Նորա։

Որհնէցէ՛ք զտէր ամենայն դործք Նորա, զի ընդ ամենայն տեղիս է տէրութիւն Նորա. օրհնեա անձն իմ զՏէր։

Տէր լուր աղօթից իմոց, ունկն դիր ձայնի աղաչանաց իմոց ճշմարտութեամբ քում։ Լուր ինձ արդարութեամբ քում, և մի՛ մտաներ՝ ի դատաստան ընդ ծառայի քում, զի ոչ արդարանայ առաջի քո ամենայն կենդանի։

Ձայնեաց Թշնամին զանձն իմ, խոնարհ արար յերկիր

զկեանս իմ, և նստոյց զիս
ի խաւարի որպէս մեռեալ
յաւիտենից։
Զանձրացաւ յիս հոգի իմ
և սիրտ իմ խռովեցաւ յիս։
Յիշեցի զաւուրսն զառա-
ջինըս, խորհեցայ յամենայն
գործս քո. յարարածս ձե-
ռաց քոց խորհեցայ, և
համբարձի առ քեզ զձեռս
իմ։
Ընձն իմ որպէս երկիր ծա-
րաւի է առ քեզ, վաղվա-
զակի լուր ինձ տէր զի նը-
ւաղեցաւ յինէն հոգի իմ։
Ար զարձուցաներ զերեսս

քո յինէն, նմանիցիմ այնո-
ցիկ ոյք իջանեն 'ի գուբ։
Լսելի արա ինձ առաւօտու
զողորմուԹիւնս քո, զի ես
'ի քեզ տէր յուսացայ։
Ցո՛յց ինձ ճանապարհ յոր
և գնացից, զի առ քեզ
տէր համբարձի զանձն իմ։
Փրկեա զիս 'ի Թշնամեաց
իմոց տէր, զի զքեզ ապա-
ւէն ինձ արարի։
Ուսո՛ ինձ առնել զկամս
քո, զի դու ես աստուած
իմ։
Հոգի քո բարի առաջնոր-
դեսցէ ինձ 'ի յերկիր ու-

ՂԵՂ։

Ա՛ստան աստուած քո տէր հե-
ղուսցես ինս, արդարու-
թեամբ քով հանցես ինն-
ղութենէ զանձն իմ։
Ողորմութեամբ քով ա-
տակեա զբշնամիս իմ, և
կորո՛ զամենայն նեղիչս ան-
ձին իմոյ, զի ես ծառայ
քո եմ։

Վասն քեզ աստուած ար-
դարութեան բնութիւն, որ ոչ ներ-
ելէք ննջեսս ապահատանդ իւ-
րոյէն։ Որ յանմահ պաշ-

տօնէից քոց՝ իմացական ձայնիւ անդադար օրհնաբանիս։ Որ և զիս զհողեղէն ծառայս քո յանձնեցեր՝ի պահպանութիւն նոցա. և կարգեցեր քնածու քնութեան՝ զարթուն ծառայսդ՝ի խնամակալութիւն։ Որպս և շնորհեցեր թմրեցելոյս ձայնատու և զարթուցիչ իւրև զգիշերային հաւանակս, կանխել՝ի փառաբանութիւն անուան քո սրբոյ, զի և՝ի հողեղինացս հաճեցար առնուլ զօրհնութիւն։ Ոհանամ զքէն ան-

մատչելի լոյս սուրբ երրորդութիւն, որ զիս ազատեցեր ի խաւարագնաց դիւաց՝ ի թշնամեաց սիրկուածեան իմոյ. և ընդ արթուն բնութիւն հրեշտակացդ՝ օրհնաբանակից քեզ արարեր: Օ՛ի՛նչ տաց քեզ տրիտուր և փոխանակ բարերարութեանդ տէր իմ, կեանք իմ, լոյս իմ, և աղբիւր ամենայն բարեաց, եթէ ոչ զկեանս իմ՝ զոր ետուր և շնորհեցեր ինձ ի գիշերիս յայսմիկ, քեզ նուիրեցից ի մշտնջենաւոր

և յանդագար միաւորա-
նութիւն. թէպէտ չեմ բա-
ւական ըստ արժանեաց միա-
ւոյ քոյ օրհնել զքեզ:
Ընդ՞ որպէս հրեշտակաց
քոց տաս նոր ի նորոյ ըզ
զանազան կերպ զքեզ օրհ-
նելոյ՝ և երեքսրբութենիս միա-
ձայնելոյ, տուր և ինձ ա-
ղաչեմ զքեզ՝ արժանաւորիլ
մտաց, նոր օրհնութեամբ
զնորոգիչդ կենաց իմոց բա-
րեբանել: Դու տէր՝ և
զառաւօտս խաղաղութեան
մինչև ցերեկոյ շնորհեա ինձ
առանց միոձանաց անցու-

յանել, որ խնդրեմն զարքայութիւն քո՝ի սկզբան աւետեան խնդրուածոց իմոց։ Տէր երկնի և երկրի, և հրամայող ծովու և ցամաքի, դու և զայլ բարիս բնութեան՝ շնորհաց և փառաց ողորմութեամբ քումբ պարգևեա ինձ, և արդար վաստակոց յաւուրս յայսմիկ արժանի արա. որով և կարիք իմ և իմոցս լցցին, և աղքատք՝ի փշրանաց սեղանոյ մեծատանդ յագեսցին. և օրհնեսցեն զքեզ այժմ և յաւիտեանս, ամէն։

ՀԱՆԳԱՆԱԿ ՀԱՒԱՏՈՅ

Հաւատամք ի մի աստուած ի հայր ամենակալ յարարիչն երկնի և երկրի, երևելեացդ և աներևութիցդ։ Հաւատամք և ի մի տէր Յիսուս Քրիստոս՝ որդին աստուածոյ ծնեալն յաստուածոյ հօրէ միածին, այսինքն յէութենէ հօր։ Աստուած յաստուածոյ, լոյս ի լուսոյ, աստուած ճշմարիտ յաստուածոյ ճշմարտէ, ծնունդ՝ և ոչ արարած։ Զոյն էնքն ի բնու-

թեննէ հօր. որով ամենայն
ինչ եղև յերկինս և յերկրի՝
երեւելիք և աներեւոյթք:
Որ յաղագս մեր՝ մարդկան
և վասն մերոյ փրկութեան
իջեալ յերկնից՝ մարմնա-
ցաւ, մարդացաւ, ծնաւ
կատարեալապէս ՚ի մարիա-
մայ սրբոյ կուսէն՝ հոգւովք
սրբով: Որով էառ զմար-
մին զհոգի և զմիտս և զա-
մենայն որ ինչ է ՚ի մարդ՝
ճշմարտապէս և ոչ կար-
ծեօք: Չարչարեալ, խա-
չեալ, թաղեալ, յերրորդ
աւուր յարուցեալ. ելեալ

յերկինս նովին մարմնով նստաւ ընդ աջմէ հօր։ Ղա-ղոց է նովին մարմնովն և միաւորք հօր դատել զկեն-դանիս և զմեռեալս. որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան։

Հաւատամք և ի սուրբ հո-գին յանեղն և ի կատա-րեալն. որ խօսեցաւ յօրէ-նըս և ի մարգարէս և յա-ւետարանս։ Որ էջն ի յոր-դանան. քարոզեաց զա-ռաքեալն. և բնակեցաւ ի սուրբսն։

Հաւատամք և ի մի միայն

ընդհանրական և առաքելական եկեղեցի։

Հաւատամք ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն ի քաւութիւն և ի թողութիւն մեղաց։ Ի յարութիւն մեռելոց. ի դատաստանն յաւիտենական հոգւոց և մարմնոց, յարքայութիւնն երկնից և ի կեանսն յաւիտենականս։

Իսկ որք ասեն, եր երբեմն յորժամ ոչ էր որդի, կամ էր երբեմն յորժամ ոչ էր սուրբ հոգին. կամ թէ

յոչէից եղեն, կամ յայլմէ էութենէ կամ ՚ի գոյութենէ անեն լինել զանեզ որդին աստուծոյ, կամ զսուրբ Հոգին. և թէ՝ փուխոխելիք են կամ այլայլելիք, զայնպիսի ասացողն նզովէ կաթողնիկէ և առաքելական եկեղեցի։

Ի սրբոյ Լուսաւորչէն մերմէ ասացեալ։

Իսկ մեք փառաւորեսցուք որ յառաջ քան զյաւիտեանս, երկիր պագանեցուլ սրբոյ երրորդութեանն և մի աստուածութեանն

հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

ՓԱՌԱՔԱՆՈՒԹԻՒՆ

Փառք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն։ Օրհնութիւն քեզ ի բարձունս. օրհնեալ ես տէր աստուածմեր. օրհնեմք զքեզ, և պաւեմք զքեզ։ Խոստովա-

նիմք տէր զքեզ, և երկիր-
պագանեմք քեզ. փառաւո-
րեմք զքեզ. գոհանամք
տէր զքէն վասն մեծի փա-
ռացդ քոց։

Տէր թագաւոր սուրբդ
երկնային՝ աստուած և հայր
ամենակալ։ Տէր և որդի
հո՛ր միածին Յիսուս Քրիս-
տոս և սուրբ որդի։ Տէր
աստուած գառն աստու-
ծոյ և որդի հօր, որ առեր
զմեր ի կուսէն։ Ողորմե-
ցար բարձեր զՁեղս աշ-
խարհի, և արդ ընկալ զա-
ղաչանս մեր։

Սուրբդ որ նստիս ընդ աջմէ
Հօր՝ ողորմեաց մեզ։ Օ՛ւ
դու միայն սուրբ, դու
միայն բարձրեալ ես։ դու
միայն տէրմեր Յիսուս Քրիս-
տոս։ Տէր և հոգիդ սուրբ
որ ի փառս աստուած ընդ
Հօր, ամէն։

Եւ յամենայն ժամ օրհ-
նեմք զքեզ, և գովեմք զա-
նուն սուրբ քո յաւիտեան
և յաւիտեանս յաւիտենից։
Ընժանի արա տէր զօրս
զայս խաղաղութեամբ, և
առանց մեղաց պահեա զմ

մեզ։ Որհնեալ ես տէր աստուած հարցն մերոց, գովեալ և փառաւորեալ է անուն սուրբ քո յաւիտեանս, ամէն։

Որհնեալ տէր ուսո՛ւ ինձ զարդարութիւնս քո. որհնեալ տէր ուսո՛ւ ինձ զարդարութիւնս քո. որհնեալ տէր ուսո՛ւ ինձ զարդարութիւնս քո։ Տէր ապաւէն եղեր մեր ազգէ յազգ։ Ես աղաչեմ տէր ողորմեա՛ ինձ, և բժշկեա՛ զանձն իմ, ես մեղայ քեզ։ Այս մեզ տէր ողորմութիւնս քո, և ըզ

փրկութիւնս քո տուր մեզ։ Տէր ողորմութիւն քո յաւիտեան, զգործս ձեռաց քոց մի՛ անտես առներ։ Տէր իմ զքեզ ապաւէն ինձ արարի ուստի ինձ առնել զկամս քո, զի դու ես աստուած իմ։

Ի քէն է տէր աղբիւր կեանդանութեան, և լուսով երեսաց քոց տեսանեմք ըզլոյս։ Ընդ ագեա՝ զողորմութիւնս քո՝ որք ճանաչեն զքեզ տէր։

ԸՂՕՐԿ

ՀԱՆԳՍՏԵԱՆ ԺԱՄՈՒՆ

ՑԵՆՈՒՆ ՀՕՐ ՆԻ ՈՐԴՒՈՑ ԻՒՐ ՀՈԳԻՈՑՆ ՍՐՈՑ ԵՄՒՆ

Հայր մեր որ յերկինս։

Ա՛ռաքեա տէր զլոյս քո և զճշմարտութիւն քո, զի առաջնորդեսցեն ինձ և հանեցեն զիս ՚ի լեառն սուրբ և ՚ի յարկս քո։

Ա՛տից առաջի սեղանոյ աստուծոյ առ աստուած, որ ուրախ առնէ զմանկութիւն իմ։

Խոստովան եղէց քեզ օրհնութեամբ աստուած աստուած իմ:

Ընդ ընդէր տրտում ես անձն իմ, կամ ընդէր խռովես զիս. յուսա առ աստուած, խոստովանեա նմա՝ փրկիչ երեսաց իմոց աստուած է:

Փառք հօր և որդւոյ և:

Նաև խաղաղութեան ըզ տէր աղա:

Օրհնութիւն և փառք հօր և որդւոյ և հոգ:

Նկատցէ՛ի վերայ իմ ողորմութիւն քո տէր, և փրկութիւն քո ըստ բանի քում:

Տաց պատասխանի որք նախատեն զիս բանիւք, զի յոյս ե՛մ ի բանս քո յուսացայ:

Մի՛ ի բացիայ առներ ի բերանոյ իմմէ զբան ճշմարտութեան մինչև յոյժ, զի յիրաւունս քո յուսացայ:

Պահեցի զօրէնս քո յամենայն ժամ, յաւիտեան և յաւիտենից յաւիտենից:

Վնայի ես յանդորրու, զի զպատուիրանս քո խնդրեցի:

Խօսէի զվկայութիւնս քո առաջի թագաւորաց, և ոչ ամաչէի:

Խորհէի ի պատուիրանս քո, զոր սիրեցի:

Ամբարձի զձեռս իմ ի պատուիրանս քո, զոր սիրեցի, և խորհէի յարդարութեան քումմ:

Յիշեա զբան ծառայի քո՝ յոր և յուսացուցեր զիս:

Սա մխիթարեցէ զիս ի խոնարհութեան իմում, զի բան քո կեցոյց զիս:

Ամբարտաւանք անիրաւեցան յիս յոյժ, այլ յօրինաց

քոց ես ոչ խոտորեցայ։
Ընդեցի զիրաւունս քո յա-
ւիտենից տէր, և մխիթա-
րեցայ։
Տրտմութիւն կալաւ զիս ՚ի
մեղաւորաց, և ոչք թողին
զօրէնս քո։
Պատչելի են ինձ իրաւունք
քո ՚ի տեղւոջ պանդխտու-
թեան իմոյ։
Ընդեցի ՚ի գիշերի զանուն
քո տէր, և պահեցի զօրէ-
նըս քո։
Սա եղև ինձ ճանապարհ
՚ի կեանս, զի զարդարու-
թիւնս քո խնդրեցի։

Օ՜ անօրէնս ատեցի, և զօրէնս քո սիրեցի։

() գնակաւ և փրկիչ իմ ես դու, և ես ի բանս քո յուսացայ։

Ի բաց եղերուք ինէն չարք, և քննեցից զպատուիրանս աստուծոյ իմոյ։

() գնեա ինձ ըստ բանի քում և կեցո զիս, և մի՛ յամօթ առներ զիս ի յուսոյ իմմէ։

() գնեա՛ ինձ և ապրեցո՛ զիս, և խորհեցայց յիրաւունս քո յամենայն ժամ։

Ընարգեցեր զամենեսեան՝

որք ապաստամբք եղեն յարքայութենանդ քոյ զի անիրաւութեամբ էին խորհուրդք նոցա։

Յանցաւորս համարեցայ զամենայն ճեղաւորս երկրի. վասն այսորիկ սիրեցի զպատուիրանս քո։

Լևեռևեա ընդ երկիւղ քո զմարմին իմ, զի՝ ի դատաստանաց քոց երկեայց յոյժ։

Ստեղծին անդրուանդ քիմ առաջի քո տէր, ըստ բանի քում իմաստուն արա զիս։

Ստացին զաղօթք իմ առաջի քո տէր, և բանիւ քո

փրկեա զիս։
Ընդհատցեն շրթունք իմ զօրհնութիւնս քո, յորժամ ուսուսցես ինձ զարդարութիւնս քո։
Խօսեսցի լեզու իմ զբանս քո, զի ամենայն պատուիրանք քո արդարութեամբ են։
Եղիցի ձեռն քո՝ ի կեցուցանել զիս, զի զպատուիրանս քո ընտրեցի։
Յանկացայ փրկութեան քումդ տէր, և օրէնք քո խօսք իմ էին։
Կեցցէ անձն իմ, օրհնեսցէ զքեզ. և իրաւունք քո օգ-

Նեսցեն ինձ:
Ո՞ղորեցայ ես որպէս զոչ-
խար կորուսեալ, խնդրեա
զծառայս քո, զի զպատուի-
րանս քո ես ոչ մոռացայ:
Ո՛ւ եկեսցեն ՚ի վերայ մեր
ողք ամբարտաւանից, և
ձեռք մեղաւորաց մի՛ դո-
ղացուսցեն զմեզ:
Ընդ անկցին ամենեքեան
ոյք գործեն զանօրէնու-
թիւն. մերժեսցին և այլ
մի՛ կարասցեն հաստատել:
Ես ՚ի տէր յուսացայ, ցըն-
ծացայց և ուրախ եղէց
յաստուած փրկիչ իմ:

Տէր տէր ետ ինձ զօրութիւն և կացոյց զոտս իմ ի հաստատութեան, ի վերայ պարանոցի թշնամւոյն կացոյց զիս, և հանգոյց զիս երագ երագ։

Որ ընակեալն է յօգնութիւն բարձրելոյն, ընդ հովանեաւ աստուծոյ յերկինս հանգիցէ։

Ընասցէ տեառն ընդունող իմ ես, ապաւէն իմ աստուած և ես յուսամ ի նա։

Նա փրկեսցէ զիս յորոգայթէ որսողին, և ի բանից

'ի խոսուլութենէ ։
Ի թիկնամէջս իւր ընկալցի
զքեզ, 'ի հուպանի թեւոց
նորա յուսացից ։
Որպէս զէն շուրջ եղիցի
զքեզ՝ ճշմարտութիւն նորա ։
Ոչ երկեցես ի սու յերկիւղէ
գիշերի, և ոչ 'ի նետէ՝ որ
թռչի 'ի տուէ ։
Յիրէ որ շրջի 'ի խաւարի,
'ի գայթակղութենէ դիւին
'ի հասարակ աւուր ։
Ընկցին 'ի կողմանէ քումմէ հազարք, և բիւրք ընդ
աջմէ քումմէ. և առ քեզ
ինչ ոչ մերձեսցին ։

Նայց միայն աչօք քովք հայեսցիս դու, և վհատուցումն մեղաւորաց տեսցես, զի դու տէր յոյս իմ ես:

Ծառձեալն արարեր քեզ ապաւէն, զի ոչ հասցեն առ քեզ չարք. և տանջանք մի՛ մերձեսցին ՚ի յարկս քո: Հրեշտակաց իւրոց պատուիրեալ է վասն քո, ՚ի պահել զքեզ յամենայն ճանապարհս քո:

Ի բազուկս իւրեանց ընկալցին զքեզ. զի մի՛ երբէք հարցես զքարի զոտն

քո։

Ի վերայ իմէ և քարոզից գնասցես դու, և առ ոտն կոխեսցես զառիւծն և զվիշապն։

Քանզի յիս յուսացաւ, և փրկեցից զնա. Հովանի եղէց նմա, զի ծանեաւ զանունն իմ։

Կարդասցէ առ իս՝ և ես լուայց նմա, և առ նմա եղէց ի նեղութեան։

Փրկեցից և փառաւորեցից զնա, երկայնութեամբ աւուրց լցուցից և ցուցից նմա զփրկութիւն իմ։

Ա՛ռ քեզ տէր հանդարձի զաչսիմ , որ քնակեալդ ես ի յերկինս :

Որպէս աչք ծառայի ի ձեռն տեառն իւրոյ , և որպէս աչք աղախնոյ ի ձեռն տիկնոջ իւրոյ :

Այնպէս են աչք մեր առ քեզ տէր աստուած մեր , մինչև ողորմեսցիս ի վերայ մեր :

Ողորմեա մեզ տէր ողորմեա մեզ , վի լացաք լըցաք արհամարհանօք :

Եւս առաւել լցան անձինք մեր նախատանօք , որք նա-

խաւէին զմեզ և արհամարհանօք ամբարտաւանից։

Աստուած յանուան քում կեցո զիս, և ի զօրութեան քում իրաւ արա ինձ։

Աստուած լուր աղօթից իմոց, ունկնդիր բանից բերանոյ իմոյ։

Տարք յարեան ի վերայ իմ և հզօրք խնդրեցին զանձն իմ, և ոչ համարեցան զքեզ աստուած առաջի իւրեանց։

Ահա աստուած օգնական իմ, և տէր ընդունող հոգւոյ իմոյ։

Ի դարձուցանել զչարն ի
Թշնամին իմ , ճշմարտու-
Թեամբ քում սատակեա՛ զը-
նոսա :

Ես կամօք իմովք պատա-
րագս մատուսից քեզ , և
խոստուիլան եղէց անուա՛ն
քում տէր , զի բարի է :
Զամենայն նեղութենէ իմ
ազ փրկեցեր զիս , և ի
Թշնամիս իմ եառեսակն իմ :
Որհեալ ես դու տէր աս-
տուած հարցն մերոց , գո-
վեալ և առաւել բարձրա-
ցեալ յաւիտեան :
Եւ օրհնեալ է անուն սուրբ

փառաց քոց, գովեալ և ա-
ռաւել բարձրացեալ յա:
Օրհնեալ ես ի տաճարի
փառաց սրբութեան քո,
գովեալ և առաւել բարձ:
Օրհնեալ ես ի վերայ ա-
թոռոյ արքայութեան քո,
գովեալ և առաւել բարձ:
Օրհնեալ ես որ նստիս ի
քրովբէս և հայիս յան-
դունդս, գովեալ և առա:
Օրհնեալ ես ի վերայ հաս-
տատութեան երկնից, գո-
վեալ և առա:
Օրհնեցէք զաստուած ի
սրբութենան նորա, օրհ-

նեցէք զնա ՚ի հաստատուԹեան ՚ի զօրուԹեան նորա։

Որ նեցէք զնա ՚ի զօրուԹեան նորա , որ նեցէք զնա ՚ի բազում մեծուԹեան նորա ։

Որ նեցէք զնա ՚ի ձայն որհնուԹեան , որ նեցէք զնա սաղմոսիւք և որհնուԹեամբ։

Որ նեցէք զնա ցնծուԹեամբ , գովեցէք զնա ուրախուԹեամբ ։

Որ նեցէք զնա ՚ի քանդակ քաղցր , գովեցէք զնա ՚ի բարձր լսելի ։

Որ նեցէք զնա ՚ի ձայն գո-

հուլիան , ամենայն հո-
գիք օրհնեցէք զտէր :
Որդ արձակեա զծառայս
քո տէր ըստ բանի քում
ի խաղաղութիւն , զի տե-
սին աչք իմ զփրկութիւն
քո զոր պատրաստեցեր ա-
ռաջի ամենայն ժողովրդոց :
Լոյս յայտնեցար հեթանո-
սաց , և փառք ժողովրդեան
քում իսրայէլի :
Ձգեցեր զձեռն քո՝ և փըր-
կեաց զիս աջ քո , և տէր
հատուսցէ ընդ իմ :
Տէր ողորմութիւն քո յա-
վիտեան , զգործս ձեռաց

քոց մի՛ անտես առներ։
Տէր հան ի լանտէ զանձն
իմ, գոհանամ զանուանէ
քումմէ։
Եւ քեզ սպասեն արդարք
մինչև հատուսցես։
Ողջասցուսցէ անձն իմ քէ
տէր, և ցնծասցէ հոգի իմ
աստուածով փրկչաւ իմով։
Ամէն ասար ի վերայ խոս-
նարհութեան աղախնոյ իւ-
րոյ, այսուհետև երանի-
ցեն ինձ ամենայն ազգք։
Ամար ընդիս մեծամեծս
հզօրն, և սուրբ է անուն
նորա։

Ողորմութիւն արար ազգաց յազգս երկիւղածաց իւրոց, արար զօրութիւն բազկաւ իւրով։

Ցրուեաց զամբարտաւանս ի մտաց սրտից, և քակեաց զկզօրս յաթոռոց։

Խոնարհս բարձրացոյց՝ զզկարօտս եղից բարութեամբ, և զմեծատունս արձակեաց ունայնս։

Պաշտպանեաց իսրայէլի ծառայի իւրոյ, յիշելով զողորմութիւն իւր։

Որպէս խօսեցաւ առ հարսն մեր՝ ընդ աբրահամու և

զաւակի նորա յաւիտեան։
Տո՛ւր զօրութիւն ծառայի
քո, կեցո՛ զորդի աղախի-
նոյ քո, և արա առիս նշան
բարութեան։
Տեսցեն ատելիք իմ և ամա-
չեսցեն, զի դու տէր օգ-
նեցեր ինձ և մխիթարե-
ցեր զիս։
Փառք Հօր և որգւոյ և։

ՄԱՂԹԱՆՔ

Ընդէ՞ն իմ ի՛ձեռս քո է յա-
ճենային ժամ, և ի՛ սուրբ
հաչ քո յուսացեալ եմ թա-

գաւառ երկնաւոր, զբազմութիւն սրբոց քոց բաներևոյս ունիմ առ քեզ: Որ երկայնամիտդ ես առ ամենեսեան, մի՛ անտես առներ զապաւինեալս ՚ի քեզ. այլ պահեա պատուական և սուրբ հաչիւքով ՚ի խաղաղութեան:

ՔԱՐՈՋ

Ընդունելութիւք զամենակալն աստուած և հանդրեսցուք ՚ի նմանէ, զի առաքեսցէ զհրեշտակ խաղաղութեան,

որ եկեալ պահեսցէ զմեզ յերկիւղական գիշերիս, ի դիւական խռովութենէ, ամբողջ պահելով զհոգի և զմարմին մեր՝ մինչև ի կատարումն ժամանակի ամաց մերոց: Ընդունակալ տէր աստուած մեր կեցո՛ և ողորմեա՛: Կեցո՛ տէր: Օ՛հանգիստ գիշերիս խաղաղութեամբ անցուցանել հաւատալ ի տեառնէ խնդրեսցուք: Շնորհեա՛ տէր:

Օ՛հրեշտակ խաղաղութեան պահապան անձանց մերոց

Ի տեառնէ խնդրեսցուք։
Ողքաւութիւն և զթողու-
թիւն յանցանաց մերոց
Ի տեառնէ խնդրեսցուք։
Ողրոյ խաչին մեծ և կա-
րող զօրութիւնն յօգնու-
թիւն անձանց մերոց Ի
տեառնէ խնդրեսցուք։
Նե և մխաբան վասն ճըշ-
մարիտ և սուրբ հաւատոյս
մերոյ զտէր աղաչեսցուք։
Տէր ողորմեա։
Ողանձինս մեր և զմիմեանս
տեառն աստուծոյ ամենա-
կալին յանձն արասցուք։
Ռնդ տեառնդ յանձն ե-

ղնցուք։

Ողորմեաց մեզ տէր աստուած մեր՝ ըստ մեծի ողորմութեան քումմ. աստուածութիւն ամենեքեան միաբանութեամբ։

Տէր ողորմեա. տէր ողորմեա. տէր ողորմեա։

ԱՂՕԹՔ

Տէր աստուած մեր՝ դու պահեա զմեզ խաղաղութեամբ ի գիշերիս յայսմիկ և յամենայն ժամանակի։ Ընդ սուրբ երկիւղ քո բե-

ւեռեալ պահեա զմիտս և
զխորհուրդս մեր: Արդէս
զի յառնայն ժամ քեւ պահ-
պանեալ լիցուք յորոգայ-
թից թշնամւոյն: Եւ քեզ
հանցուք զօրհնութիւն և
զփառս հօր և որդւոյ և
հոգւոյն սրբոյ. այժմ և
միշտ և յաւիտեանս յաւ:

Խաղաղութիւն ամենեցուն,

Ի բնշտակի խաղաղութեան
յանձն արա զանձինս մեր
տէր զօրութեանց, որ և-
կեալ պահեցէ զմեզ ան-

խառնվա ՚ի տուէ և ՚ի գիշե-
րի , յարթնութեան և ՚ի
հանգստեան մերում. զի
դու ես արարիչ լուսոյ , և
հաստիչ գիշերի : Եւ այժմ
աղաչեմք զքեզ տէր աստ-
ուած մեր , զհանգիստ գի-
շերիս շնորհեա խաղաղու-
թեամբ անցուցանել , և
հասանիլ ՚ի պաշտօն առա-
ւօտու յերկրպագութիւն և
՚ի փառաբանութիւն ամե-
նասուրբ երրորդութեանդ ,
այժմ և միշտ և յաւիտեանս
յաւիտենից , ամէն :

ՍԱՂՄՈՍ Դ.

Խաղաղութեամբ յայս և ի սոյն ննջեցուք և զարթիցուք, զի դու տէր միայն առանձին յուսով քո բնակեցուցեր զմեզ։

Ի կարդալիմոմ լուաւ ինձ աստուած ըստ արդարութեան, ի նեղութենէ ինձ անդորր արարեր. ողորմեա ինձ և լուր աղօթից իմոց։

Որդիք մարդկան մինչեւ յե՞րբ էք խստասիրտք, ընդէ՞ր սիրէք զնանրութիւն, և խնդրէք զստութիւն։

Ո՛ւաներուք զի սքանչելիս արար տէր սրբոյ իւրում, և տէր լուիցէ ինձ ՚ի կարդալ իմում առնա։

Նարկանայք՝ և մի՛ մեղանչէք, զոր ինչ ասէք ՚ի սիրտս ձեր՝ յանկողինս ձեր զղջացարուք։

Ա՛ատուցէք պատարագս արդարութեան, և յուսացարուք ՚ի տէր։

Նաղումք ասէին, թէ ո՞ ցուցցէ մեզ զբարութիւն տեառն, նշանեալ առ մեզ լոյս երեսաց քոց, և ետուր ուրախութիւն սրտից մերոց։

Ի պատրոյ ցօրենոյ գինւոյ և ձիթոյ իւրեանց լցուցեր զնոսա։

Խաղաղութեամբ յայս և ի սոյն ննջեսցուք և զարթիցուք, զի դու տէր միայն առանձին յուսով քո բնակեցուցեր զմեզ։

Ա՛լէլուիա (Որթի։

Խաղաղութիւն ամենեցուն։

Եւ բնդ հոգւոյդ քումի։

Երկիւղածութեամբ լուսարուք։

Սրբոյ աւետարանիս՝ որ ըստ Ցովհաննու։

Փառք քեզ տէր աստուածմեր։

պռօսխուսմէ ։
Ընէ աստուած ։

Տէրն մեր յիսուս քրիստոս ասէ։

Ընդէն ամէն ասեմ ձեզ . եթէ ոչ հատն ցորենոյ անկեալ յերկիր մեռանիցի , ինքն միայն կայ . ապա եթէ մեռանիցի՝ բազում արդիւնս առնէ ։ Որ սիրէ զանձն իւր՝ արձակէ զնա . և որ ատեայ զանձն իւր յաշխարհիս յայսմիկ , ՚ի կեանսն յաւիտենական պահեսցէ զնա ։ Եթէ ոք զիս պաշտիցէ , զկնի իմ ե-

կեսցէ. և ուր եան եմ, անդ և պաշտօնեայն իմ եղիցի. եթէ ոք զիս պաշտիցէ, պատուեսցէ զնա Հայրն իմ։

ՓԱՌՔ ՔԵԶ ՏԵՐ ԱՍՏՈՒԱԾ ՄԵՐ։

Սուրբ հաչիւս աղաչեցուք զտէր, զի սուաւ ի լերկեսցէ զմեզ 'ի ռեզայ՝ և կեցուսցէ զնորհիւ ողորմութեան իւրոյ։ Զմեռնակալ տէր աստուած մեր. կեցո՛ և ողորմեա՛։

Պահպանեա՛ զմեզ քրիստոս աստուած մեր՝ ընդ

Հովանեաւ տուրբ և պատուական խաչիդ քում ի խաղաղութեան, որ կեաս յերկինս և յանեղեալ էութեամբ Հաշնաւոյն։ Ընժանութեան գոհութեամբ պատարագել զքեզ ընդ հօր և ընդ սրբոյ Հոգւոյդ այժմ և միշտ։

Օրհնեալ ես մեր Յիսուս քրիստոս, ամէն։

Ա՛յլ մեր որ յերկինս։

Ընկանիմք առաջի քո տուրբ աստուած ածին և աղաչեմք զանարատ զկոյսդ, յար-

խօսեա վասն անձանց Տեառն, վրկել զմեզ ի փորձութենէ և յամենայն վտանգից Տեառն։

Աղաչանք զօրաւորք՝ արհաւրաց դիշերային, ասացեալ սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ։ ԺՌ.

Ընկալ քաղցրութեամբ տէր ապաւաճ հոգւոյ՝ զդատաստանացդ զաղաչանս. մատիր զմուխեամբ աւտ պատկառանաւք դիմօք. վարատեա ամենապատիր և զամօթական տխրութիւնս. լսէձ ի-

նէն ողորմած՝ զանբերե-
լի ծանրութիւնս. անջըր-
պետեա հնարաւոր՝ զմա-
հացու կրթութիւնս. ա-
ւարեա միշտ յաղթող՝ ըզ
խաւսողին հաճութիւնս.
բացատրեա վերնային՝ զմո-
լեցոյն մառախուղ. կնքեա
կեցուցիչ՝ զկորուսչին ըն-
թացմունս. ցրուեա ծածկա-
ւտեա՝ զըմբռնողին չար
դումունս. խորտակեա ան-
քնին՝ զմարտողին դիմեց-
մունս։ Տեառնապրեա քո
անուամբդ զլուսանցոյց երդ
յարկիս. պարիսպեա քո

ձեռամբդ զառաստաղ տա-
ճարիս . գծագրեա՛ քո ար-
եամբդ զմուտ սեմոց սե-
նեկիս . կերպացո՛ զքո նը-
շանդ ՚ի հետս եկից մաղ-
թողիս . ամրացո՛ քո աջովդ
զհանգստեանս հաշտի . մաք-
րեսցե՛ս ՚ի հաղբից զծած-
կարան անկողնոյս . պահես-
ցե՛ս քո կամօքդ զթաւա-
պեալ անձն ոգւոյս . ան-
խարդախ արասցես զքո
ընտրեալ շունչ մարմնոյս .
կացուսցե՛ս ընդաւիակ զպար
զօրուդ երկնայնոց . կար-
գեսցե՛ս ՚ի դիմի ընդդէմ

դիւացն դասուս: Տուր հանգիստ երկրութեան մահանգոյնս նիրհման ի խորութեան գիշերիս, քանզի խօսութեամբ հայցուածոյ սրբոյ աստուածածնիդ և ամենայն ընտրելոյ: Ամփոփեալ պարուրեա զպատուհան տեսութեանց զգայարանացս իմաստից անզարհուրելի զեռելովամբ՝ ի ծուխական խառնուրդեանց, կենցաղական զբաղմանց, անրջական եւրադոց, խօլականաց ցնորից, յիշատակաւքս յուսոյդ անվնասելի

պաշտպանեալ։ Նա սկսա-
փեալ վերստին ի ննջմանէ
ծանրութեան, ամենապաստ
արհնութեամբ՝ հոգեն
լոյս զուարճութեամբ ի
քեզ արձանացեալ, զայս
ձայն մաղթանաց՝ լու-
մամբ հաւատոյ քեզ ամե-
նօրհնեալ Թագաւոր փա-
ռաց անճառից փառաբանու-
զաց երկնապուրմար խմբից
երգակցեալ՝ յերկինս առա-
քեալ։ Ո՞վ դու փառաւոր-
եալ ես յաւիտեան արարած
ոց յաւիտենից յաւիտե-
նից, ամէն։

Աղօթք նորին սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ ։ ԽԱ ։

Ո՛րդի աստուածոյ կենդանւոյ օրհնեալ յամենայնի՝ հօրդ ահաւորի անքնին ծնունդ, որ տկարանայ առ՛ի քէն և ոչինչ. որ՛ի ծագել անրատուեալ նշուլից ողորմութեան քոյ փառաց՝ հալին մեղք, հալածին դևք, ջնջին յանցանք, խզին կապանք, խորտակին շղթայք, կենդանանան մահացեալք, բժշկին հարուածք, ողջանան վէրք, բառնին ապականութիւնք,

տեղի տան տխրութիւնք, նահանջին հեծութիւնք, փախնու խաւարն, մեկնի մէգն, մերժի մառախուղն, փարատի մռայլն, սպառի ազջամուղջն, վերանայ մութն, գնայ գիշերն, տարածի տագնապն, էքանան չարիքն, հալածին յուսահատութիւնքն, և թագաւորէ ձեռն քո ամենակալ՝ քաւիչդ ամենայնի: Որ ոչ ևկիր կորուսանել զմարդկան ոգիս՝ այլ կեցուցանել. թող ինձ զանթիւ չարիան իմ բազում ողորմութեամբդ: Օ՛ի դու

միայն ես յերկինի անճառ, և յերկրի անպինն, ի տարր գոյի, և յեղբս ծագաց աշխարհի, սկիզբն ամենայնի և յամենայնի. ամենայն լսեալդ, օրհնեալ ի բարձունս, և քեզ ընդ հօր և հոգւոյդ սրբոյ փառք յաւիտեանս. ամէն:

Աղօթք Եւթին սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ։ 2Ք.

Աստուած և տէր, կեանք և արարիչ, ողորմած, գթած, լցյս, երկայնամիտ, անոխա-

կալ, մարգասէր, ամենա-
գութ, պարզևատու, իմըր-
կիչ, օրհնեալ, գովեալ, բա-
րեբանեալ: Վասն ամենա-
ճեան, պատուական վստա-
հութեան, առանց նենգու-
թեան բարի, առանց խա-
տրի ճառագայթ, քաւիչ
մեղաց, ողջացուցիչ վիրաց,
անհասանելեաց հնարք, ան-
մատչելեաց հպատուր, ան-
յուսութեան ելք, անուն
քո խոստովանեալ աստու-
ծոյ որդի. և հօր քո ընդ
քեզ հզօրի և ահաւորի, և
հոգւոյդ ամենակալի և

ընդ քեզ երկրպագելոյ՝ միաւոր և պաշտօն գոհաբանութեան յաւիտեանս. ամէն։

Աղօթք նորին սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ։ ՂԲ.

Ըստուած յաւիտենական, բարերար և ամենակալ, ստեղծիչ լուսոյ և յօրինիչ գիշերոյ. կեանք՝ ի մահու և լոյս՝ ի խաւարի. յոյս ակն ունողաց և երկայնմտութիւն տարակուսելոց, որ ամենարուեստ իմաստու-

Թեամբ քո դարձուցանես
յայգ. զտուերս մահու,
աննուաղ ծագումն, և ան-
մուտ արեգակն, քանզի
ոչ զօրէ ծածկել զիւաս
տէրութեան քո խաւար գի-
շերոյ. որում կրկնի ծուն-
երկրպագութեան ամենայն
եղելոց՝ երկնաւորաց և երկ-
րաւորաց և սանդարամե-
տականաց. որ լսես զՀե-
ծութիւն կապելոյ, և հա-
յիս յաղօթս խոնարհաց,
և ընդունիս զխնդրուածս
նոցա, աստուած իմ և
Թագաւոր իմ, կեանք իմ

և ապաւէն իմ, յոյս իմ և վստահութիւն իմ, Տէ-
սուս քրիստոս աստուածդ
ամենայնի, սուրբ հան-
դուգնեալ ի հոգիս սրբոց
մխիթարութիւն վշտաց և
քաւարան մեղուցելոց, որ
գիտես զամենայն յառաջ
քան զլինել նոցա. առա-
քեա զպահպանողական զօ-
րութիւն աջոյ քոյ, և փրկ-
եա զիս յերկիւղէ գիշե-
րի և ի դիւէ ցերեկի. տալէս
զի զհիշատակ սոսկալի և
սուրբ քո անուանդ միշտ
համբուրեալ զմիամիտք հոգ-

ւոյ ըղձուԹեան ընդդէմ, կենցԹից պահպանեալ ընդ այնոսիկ՝ որ կարդան զքեզ
'ի լոյսըդ սրտէ։
Եւ 'ի դրոշմէ խաչին քոյոյ նշանիդ, զոր առեալ ընկենուլ յին արեամբդ քո նենգեալ նախագեցեր, և 'ի նոյն շընորհ որդեգրուԹեան զմեզ մեղ վիրաւորեցեր, և 'ի փրկուԹեան պատկերի քո նկարեալ յօրինեցեր, այսու պարգեւօք աստուածականօք առաքեսցէ աւետանայ, քակտեսցին մեքենայքն, լարձցին որոգայԹքն, պարտեսցին

ցին մարտուցեալքն , պա-
կասեսցին զէնքն սայրա-
սուրք , մերժեսցի մէգն ,
փարատեսցի խաւարն , մեկ-
նեսցի մառախուղն : Հա-
ղուկ քո հովանասցի , և աջ
քո կնքեսցէ . վասն զի գը-
թած ես և ողորմած , և ա-
նուն քո կոչեցեալ է 'ի վե-
րայ ծառայից քոց : Ընդ քեզ
ընդ հօր հոգւովդ սրբով
փառք և իշխանութիւն յա-
ւիտեան յաւիտենից , ա-
մէն :

Աղօթք հարկաւոր իւրաքանչիւր անձանց հաւատացելոց ի Քրիստոս։

Սրարեալ սրբոյն Ներսէսի Շնորհալւոյ Հայոց կաթուղիկոսի։

Հաւատով խոստովանիմ, և երկիրպագանեմ քեզ՝ Հայր և որդի և սուրբ Հոգի, անեղ և անմահ բնութիւն, արարիչ հրեշտակաց և մարդկան և ամենայն եղելոց. ողորմեա քո արարածոց և ինձ բազմամեղիս։ Հաւատով խոստովանիմ, և երկիրպագանեմ քեզ՝ ան-

բաժանելի լոյս, միաննա-
կան սուրբ երրորդութիւն
և մի աստուածութիւն, ա-
րարիչ լուսոյ և հալածիչ
խաւարի. հալածեա՛ ի հոգ-
ւոյ իմմէ վհատութիւն մեղաց
և անգիտութեան, և լու-
սաւորեա զմիտս իմ՛ ի ժա-
մուս յայսմիկ աղօթել քեզ
՛ի հաճոյս, և ընդունել ՛ի
քէն զխնդրուածս իմ. և

ողորմեա քո արարած։

Ո՛վ երկնաւոր աստուած
ճշմարիտ՝ որ առաքեցեր զոր-
դի՛դ քո սիրելի՛ ՛ի խնդիր
մոլորեալ ոչխարին, մեղայ

յերկինս և առաջի քո. ընկալ զիս որպէս զանառակ որդին, և զդեցո ինձ զպատմուճանն զառաջին՝ զոր մերկացայ մեղօք. և ողորմեա քո արարածոյ։

Որդի աստուածոյ աստուածճշմարիտ՝ որ խոնարհեցար ի հայրական ծոցոյ՝ և առեր մարմին ի սրբոյ կուսէն Մարիամայ վասն մերոյ փրկութեան, խաչեցար թաղեցար և յարեար ի մեռելոց՝ և համբարձար փառօք առ հայր, մեղայ յերկինս և առաջի քո. յիշեա զիս

որպէս զաւազակն՝ յորժամ գաս արքայութեամբ քումբ.

և ողորմեա քո ա։

Ո՛ղի աստուածոյ աստուածճշմարիտ՝ որ իջեր ՚ի յորդանան և ՚ի վերնատունն, և լուսաւորեցեր զիս մկրտութեամբ սուրբ աւազանին, մեղայ երկինս և առաջի քո. մաքրեա զիս վերըստին աստուածային հրով քումբ՝ որպէս հրեղէն լեզուօք սուրբ զառաքեալսն.

և ողորմեա քո ա։

Ընեղ բնութիւն, մեղայ քեզ մտօք իմովք, հոգւով

և մարմնով իմով. մի՛ յիշեր զմեղս իմ զառաջինս՝ զան անուանդ քումմ սրբոյ. և ոչ տեսցէ ամենայնի, մեղայ քեզ խորհրդով բանիւ և գործով. ընկալ զձեռագիր յանցանաց իմոց, և գրեա զանուն իմ՛ի դպրութեան կենաց, և ողորմեա։

Ընդ գաղտնեաց, մեղայ քեզ կամաւ և ակամայ, գիտութեամբ և անգիտութեամբ. թողութիւն ընդունիցես մեղաւորիս, զի՛ի ծննդենէ սուրբ աւազանին մինչև ցայսօր մեղուցեալ

եմ առաջի աստուածոց
թեանդ քո զգայարանօք ի-
մովք, և ամենայն անդա-
մօք մարմնոյս. և ո՛
Ընձեռնեսցէ տէր, զի՛ պա-
հապան աչաց իմոց զեր-
կիւղ քո սուրբ՝ ոչ ևս հա-
յիլ յարատ. և ականջաց
իմոց՝ ոչ ախորժել լսել զ
բանս չարութեան. և բե-
րանոյ իմոյ՝ ոչ խօսիլ զ
ստութիւն. և սրտի իմոյ՝ ոչ
խորհիլ զչարութիւն. և
ձեռաց իմոց՝ ոչ գործել
զանիրաւութիւն. և ոտից
իմոց՝ ոչ գնալ ՚ի ճանա-

պարհս անօրէնութեան. այլ
ուղղեա զշարժումն ոտից
լինել միշտ ըստ պատուի-
րանաց քոց յամենայնի. և
ողորմեա քո ա։
Ւուր կենդանի քրիստոս.
զհուր սիրոյ քո՝ զոր արկեր
յերկիր, բորբոքեա յանձն
իմ, զի այրեսցէ զախտ հոգ-
ւոյ իմոյ, և սրբեսցէ զկէղձ
մտաց իմոց, և մաքրեսցէ
զմեղս մարմնոյ իմոյ, և վա-
ռեսցէ զլոյս գիտութեան
քո ՚ի սրտի իմում. և ո։
Ւմաստութիւն հօր յիսուս,
տուր ինձ իմաստութիւն

զբարիս խորհիլ և խօսիլ և գործել առաջի քո յամենայն ժամ, ՚ի չար խորհրդոց ՚ի բանից և ՚ի գործոց փրկեա զիս. և ողոր:

Ամենօղ բարեաց տէր կամարար, մի՛ թողուր զիս ՚ի կամս անձին իմոյ գնալ. այլ առաջնորդեա ինձ լինել միշտ ըստ կամաց քոց բարեսիրաց. և ողոր:

Ընդայ երկնաւոր, տուր ինձ զարթայուխիւն քո՝ զոր խոստացար սիրելեաց քոց, և զօրացո զսիրտ իմ՝ առնել զմեղս, և սիրել զքեզ մի-

այն , և առնել զկամս քո .
և ողորմեա քո առ
Ի նամոզ արարածոց , պա-
հեա նշանաւ խաչի քո զՀո-
գի և զմարմին իմ ՚ի պատ-
րանաց մեղաց , ՚ի վրձռու-
թենանց դիւաց , և ՚ի մար-
դոց անիրաւաց , և յամե-
նայն վտանգից Հոգւոյ և
մարմնոյ . և ողոր :
Պահապան ամենայնի քրիս-
տոս , աջ քո Հովանի լեցի ՚ի
վերայ իմ ՚ի տուէ և ՚ի գի-
շերի , ՚ի նստիլ ՚ի տան , ՚ի
գնալ ՚ի ճանապարհ , ՚ինըն-
ջել և ՚ի յառնել , զի մի՛ եր-

բէք սասանեցայց. և ո՛ւ
Աստուած իմ, որ բանաս
զձեռն քո, և ընդս զամե-
նայն արարածս ողորմած.
Թեամբ քով, բեզ յանձն
առնեմ զանձն իմ դու հո-
գա և պատրաստեա զպէտս
հոգւոյ և մարմնոյ իմոյ յայ-
սըմհետէ մինչեւ յաւի-
տեան. և ողոր-
ձո՛ւցիչ մոլորելոց, դար-
ձո զվա՛ի էար սովորու-
Թեանց իմոց՝ ի բարի սո-
վորութիւն, և բեւեռեա
՛ի հոգի իմ զսոսկալի օր
մահուն, և վերկիւղ գե-

հնդին, և գոէր արքայու-
թեանն, զի զդջացայց 'ի մե-
ղաց՝ և գործեցից զարդա-
րութիւն. և ողորմեաւ
Աղբիւր անմահութեան,
աղբեւրացո 'ի սրտէ իմմէ
զարտասուս ապաշխարու-
թեան որպէս պոռնկին. զի
լուացից զձեղս անձին իմոյ
յառաջ քան զելանելն իմ
յաշխարհէս. և ողոր-
պարգեւիչ ողորմութեան,
պարգեւեա ինձ ուղղափառ
հաւատով և լարի գործով.
և սուրբ մարմնով և արեան
քո հաղորդութեամբ գալ

առքեղ. և ողորմեա:
Բարերար տէր, հրեշտակի
բարւոյ յանձն արասցես
լինի քաղցրութեամբ ա-
ւանդել զհոգի իմ, և անդ-
խտուիլ անցուցանել ընդ ջա-
րուքիւն այսոցին՝ որ են ի
քոյ երկնից. և ողոր:
Լոյս ճշմարիտ քրիստոս,
այժանաւորեա զհոգի իմ
ուրախութեամբ տեսանել
զլոյս փառաց քոց ի կոչման
աւուրն, և հանդչիլ յու-
սով բարեաց յօժեւհանս
արդարոց մինչև յօր մեծի
գալստեան քո. և ողոր:

Հաստատուր արդար, յորժամ գաս ի տաճառօք հօր դատել զկենդանիս և զմեռեալս, մի՛ մտաներ ՚ի դատաստան ընդ ծառայի քումմ. այլ փրկեա զիս ՚ի յաւիտենական հրոյն, և լսելի արա ինձ զերանաւէտ կոչումն արդարոց յերկնից առքա-

յումիւնդ. և ողոր։

Ամենողորմ տէր, ողորմեա ամենայն հաւատացելոց ՚ի քեզ, իմոց և օտարաց, ծանօթից և անծանօթից, կենդանեաց և մեռելոց. շնորհեա և ինձնամեաց ի-

մոյ և առեալեաց զԹողու-
Թիւն որ առիս յանցանաց։
և զարձո զնոսա ՚ի չարեացն
զոր ունին վասն իմ, զի ո-
զորմութեանդ քումմ ար-
ժանի եղիցին . և ողոր։
Թառաւորեալ տէր , ընկալ
զաղաչանս ծառայից քո , և
կատարեա ՚ի լարի զխըն-
դըրուածս իմ բարեհաճ-
ութեամբ սրբուհւոյ աս-
տուածածնին և յոմՀաննու
մկրտչին և սրբոյն առեփա-
նոսի նախավկային և սրբոյն
գրիգորի մերոյ լուսաւոր-
չին , և սրբոց առաքելոց՝

մարգարէից՝ վարդապետաց՝ մարտիրոսաց՝ հայրապետաց՝ ճգնաւորաց՝ կուսանաց և ամենայն սրբոց քոց երկնաւորաց և երկրաւորաց: Եւ քեզ փառք և երկրպագութիւն անբաժանելի սուրբ երրորդութեանդ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ա՛ման սրբուհւոյ աստուածածնին յարեւմտեան՝ տէր ընկալ զաղաչանս մեր, և կեցո զմեզ:

Սուրբ զաստուածածնին և զամենայն սուրբս բարեխօս արասցուք առ Հայր ՚ի յերկինս, զի կամեցեալ ողորմեացի՝ և պճնացեալ կեցուսցէ զարարածս իւր: Ամենակալ տէր աստուած մեր կեցո և ո:

Ընկալ տէր զաղաչանս մեր բարեխօսութեամբ սուրբ աստուածածնին՝ անարատ ծնողի միածնի որդւոյ քո, և աղաչանօք ամենայն սրբոց քոց: Լուր մեզ տէր և ողորմեա, ներեա քաւեա և

թող զմեզ մեր։ Աղաչանաւորեա զքոհութեամբ միածնաւորեալ զքեզ ընդ որդւոյ և ընդ սրբոյ Հոգւոյ։

Օրհնեալ տէր մեր յիսուս քրիստոս ամէն։

Լայր մեր որ յերկինս։

Ողորմեան զաղօթս և զաղաչանս ընկալ մարդասէր աստուած ի հաճոյս բարերար կամաց քոց, և մեր մեղաց և բազում յանցանացն թողութիւն շնորհեա. և քեզ միաբք յաւիտեանս, ամէն։

Փառք քեզ տէր աստուած մեր, որ պարգեւեցեր մեզ զայս բարեաւ և խաղաղութեամբ անցուցանել:

Աղաչեմ զքեզ աստուած, զառաջիկայ գիշերս որ ինձ եւս մեր գալոց է, ինձ ազգ մարդկան, ինձ չարեաց ազատեա, և ինձ գործս բարիս առաջնորդեա:

Ընդունելոյ օրհնութեանցն և փառաբանութեանցն արժանի արա զամենայն հաւատացեալս անուանդ քումդ սրբոյ, և պահեա ինձ խաղաղութեան:

Տէր աստուած մեր՝ տուր
պ.քո խաղաղութիւնդ ամե-
նայն աշխարհի , լարձ զցա-
սումն և զպատուհասն ի
յարտաքսոցս :
Ողորմեա հարց և եղբարց
մերոց՝ կենդանեաց և հան-
պուցելոց :
Ողորմեաղնկեղեցիշինողաց,
երաշտաւորաց և այնոցիկ
որք տան զպուրս ողորմու-
թեան դպրատանց , և ջանայ
ի շտ հաստատուն պահել :
Տէր աստուած՝ օգնեա մա-
պաւորայն քրիստոնէից , և
իշխանացն յարեւպաշտից ,

զօրաց և զաւակաց նոցին՝ պահելով՝ ի խաղաղութեան։ Տէր աստուած մեր՝ պահեա զմեզ ամենայն պարագայիւք՝ ամրոզջ և անխռով՝ ի կամս ողորմութեան քոյ։

Նշանաւ սուրբ և պատուական խաչիւ քոյ՝ հալածեա զերևելի և զաներևոյթ թշնամին՝ ի սահմանաց մերոց և՝ ի բնակութենէս մերմէ. տիկնա զմեզ՝ ի հրոյն յաւիտենից, և արժանի արա երանաւէտ կենացն անվախճանից, և քեզ փառք յաւիտեանս, ամէն։

ԸՆԹՕՐՔ

ԿԻՐԱԿԻ ԱՒՕՒՐ

ՑԵՆԱՒԻՆ ՀՕՐ ԵՒ ՕՐԴՒՈՑ ԵՒ ՀՕՐ ԻՈՅՆ ՄՐՈՑ ԸՍԻՆ

Հայր մեր որ յերկինս։

Աղօթք առ Հայրն երկնաւոր, ի բանից երանելոյն Յովհաննու Ոսկեբերանի։

(1) Սահմանեցից առաւած և արարիչ լոյսերից, որ առեր նախատոհմ զօրութեամբ քով ի սկզբանէ արարեր զերկինս և զերկիր, յայսմ աւուր գոյացուցեր զլոյս հրամանաւ

քում, և որոշեցեր զլոյն
ի խաւարէն : Ընդ խաւար-
եալս ազգի ազգի անօրէ-
նութեամբ, աղաչեմ զքեզ
տէր իմ և ստուած իմ՝
բարերար և բազումողորմ,
ծագեա առ նա զողորմու-
թեան զլոյս քո, և մերժեա
յինէն զխաւարային խոր-
հուրդս չարին, որում ան-
կեալ կոծանեցայ յան-
դունդս կորստեան, և կամ
ի տարակուսի :

Ո՛ր յամենայնի կարող ես և
հզօր, լոյս անստուեր, աղ-
բիւր անսպառ բարեաց, կեն-

դանուելեան պարզևատու,
ցոլացո յիս լիայլուծն սըր-
բարար շնորհաց հոգւոյդ
քո սրբոյ, և մաքրեա ըզ-
սիրտ իմ և զհոգի՛ իմ ժու-
ԹԻՆԵ մեղաց իմոց և յա-
մենայն աղտեղութենէ, ո-
րով չկարեմ հա-
յել ի լոյս սաստուածային
պատուիրանաց քոց, և դնալ
՛ի ճանապարհս արդարու-
ԹԵԱՆ:

Ամենահայեաց ակն և ան-
նիւթելի պահապան նորոյս
Իսրայէլի, որ նստիս ՛ի քրուվ-
բէս և հայիս յանդունդս,

նայեաց աչօք քաղցրութեան
յաւիտեան ծառայս քո, որ
խորասուզեալ յանդունդս
մեղաց՝ չունիմ կամ և զօ-
րութիւն ելանել ինքնին,
և չիք իմ ձեռնտու և օգնա-
կան ազատել զիս յանհնա-
րին տարտակուսանացս. այլ
դու անարգամեծար առէր՝ լեր
ինձ այցելու և պաշտպան,
և զերծո զիս ի խորոց աստի
չարեացս ամենայն աննա-
հանջելի հրամանաւ քով.
զի չիք ինչ որ արգելուլ
կարիցէ զամենակարող զո-
րութիւն քո:

Ընդհեմ զքեզ ողորմած առաքեա առիս զՀոգի աստուածութեան քո, որ շրջելով ի վերայ ջուրց կենդանագործէր զարարածս քո, զի ծննդաբեր արասցէ զամ լումիւն մտաց իմոց ի հաճոյական բանից մաղթանս յընդունելութիւն կամաց բարձրելոյդ. զի ես ինձէն առանց նպաստից նորին զոր ինչ արժան է հայցել՝ ոչ գիտեմ:

Օ՜ի նա որ քննէ զամենայն և զխորս աստուծոյ, գիտէ նա և զիս եթէ մեր և զկարիս

առաւել քան զոր խնդրեմք և իմանամք, և գթացեալ ի տկարութիւնս մեր ուսուցանէ մեզ զնոսին հայցել հաւատով, և գտանել առ ի քէն հանդերձ թողու-

թեամբ մեղաց մերոց։

Ա՛յ ընկենուր զիս յերեսաց քոց յաղերսանեալ՝ որ ոչ կացի յուխտին իմում զոր ուխտեցի քեզ յաւուրն մկրտութեան, և ոչ զգուշացայ կալ ի ճանապարհս օրինաց քոց. այլ իշխանին մոլորութեան անսացեալ խրատու՝ զառաջ եցոյց յերկ-

նագնաց պողատայէդ ՚ի փըլ-
շայեղձ մայնաւս մեղայ և
մահու. այլ դու խնամակալ
որ ոչ ձանձրանաս ՚ի բարե
րարելոյ, և ոչ յապիս յո-
ղորմածութենէ, հոգւով
պետութեան քո հաստա-
տնա զիս ՚ի պատուիրանս քո
անդրդուելի՝ ուղղել վերըս-
տին զդնացս ոտից իմոց առ
տուիչդ կենաց:

Ընդ դու կարող և մարդա-
սէր, որ յառաջ գլինելու-
թիւն երկնի և երկրի պատ-
րաստեցեր զարքայութիւնդ
՚ի ժառանգութիւն սրբոց

քոց, սրբեա և զիս յամե-
նայն անօրէնութենէ իմմէ,
և արժանաւորեա ընդ նո-
սին յարքայութեան քում
յերկինս գոհութեամբ փա-
ռաւորել զամենազօր տէ-
րութիւնդ յաւիտեանս յա-
ւիտենից, ամէն:

ԷՒՕԹՈՒՐ

ԵՐԿՈՒՀԱՒԱՏԻ ԱՒՈՒՐ

ՅԱՆՈՒՆ ՀՕՐ ՆԻ ՕՐԴՒՈՅՑ ԻՆ ՀՈԳՒՆ ՍՐՈՒՑ ԸՍՏՆ

Հայր մեր որ յերկինս։

Աղօթք առ աստուած Երրորդութիւն, ի բանից երանելւոյն Յովհաննու Գառնեցւոյ։

Թարերար և ամենակալ՝ յոյժ ապաւինի ամենայն տառապակուսելոց տէր իմ և աստուած իմ, արարիչ երից յաներից և նախահանամող բոլորից. որ յայսմ աւուր հրա-

մանաւ քով լաժանեցեր զբաղմունքին ջուրց, զքաղցունան ամբարձեր ի վեր յամպս՝ տեղալ ի վերայ երկրի, ի լղճել զաղբիւրս և խաղացուցանել զգետս, և զաղտաղտինս Թողէր յերկիր սատրին անցահման ի մաստունեամբ. և արկեր անջրպետ ի մէջ նոցա լոյծ և հոսանուտ զհաստատունքին օդոյ, զի փոխադարձ տուրևառունեամբ ջուրց մշտնջենապէս հաղորդիլ կարասցեն ընդ միմեանս վերինքն և ստորինք յօգուտ

համօրէն տիեզերաց, և ի-
պէտս ազգի մարդկան՝ զոր
հանդերձեալ էիր արարչա-
գործել ի վայելումն երա-
նաւէտ միաւոյ աստուա-
ծութեանդ քո: Արդ՝ եաւ որ
կամ էրև զջուր ստորին աղ-
տեղեալ ի ճահիճս զանազան
մեղաց գարշութեամբ, և ա-
պականեալ բազմօրինակ ա-
նօրէնութեամբ, առ քեզ
պաղատիմ արարիչ իմ և
յոյս, բարեգութ կամօքդ
վերաուեալ զմիտս իմ ի բա-
տորէ՝ մաքրագործեա որպէս
զջուրսն ամպոց յամենայն

ազատեղութեանց [illegible] քոյովդ
սրբութեամբ . և զդատ-
նութիւն նեխանալեան իմոյ
ի քաց արա յինէն քոյովդ
քաղցրութեամբ, լինել հա-
ճոյ աստուածութեան քո
կամաց՝ ի գործեստ իրաւաց
անբաւ շնորհայ քոց:

Ա՛ր հայիր ի բազմութիւն
անօրէնութեան իմոյ որ ա-
նարժան եմ կենդ, և մի՛ գար-
շիր յինէն վասն զաղջու-
թեան յանցանաց իմոց յո-
րում կամ շաղախեալ. այլ
մաստիր առիս անճառելի
գթութեամբդ, և ողորմեա

ինձ լսատ լսալուս ողորմու-
թեան քուս, զի քաղցրեա
ւս ամենեսին որք կարդան
զս քեզ, և ապաւինին ի քո
մարդասիրութիւնդ:
Դու տէր՝ զանձրև դթու-
թեան կամաց քոց՝ և զառա-
տասղել ողորմութեան քո
զմեզ անձրևեա ի սիրտ իմ,
որ ի սաստիկ ցանկութենէ
չարեաց և ի տապոյ անօրէ-
նութեան ներաշտացեալ՝ չու-
նի ինչ բերել պտղոց բարու-
թեան: և ոչ գիտեալ պարար-
տացո շնորհօք մարդասիրու-
թեան քո՝ բերել զարդիւնս

անեղծ անեղիս ՚ի պաշտել
մշտնջենաւոր և անեղական
կենաց։

Լսեր ինձ բարերար, քաւեա
անյիշաչար, և արա զծա-
ռայս քո արժանի վերին օ-
թեւիւանացդ ընդ սիրելիս ան-
ուան քո սրբոյ, և ընդ կա-
մարարս հաճոյից աստուա-
ծուքեանդ քո որ յերկինս
և որ յերկրի. զի ընդ նոսին
փառաւորեցից անվեհեր օրհ-
նաբանութեամբ զհայր և
զորդի և զսուրբ հոգիդ.
այժմ և միշտ և յաւիտեանս
յաւիտենից. ամէն։

ՊԱՕԹՈՐ

ԵՐԵՔՇԱԲԱԹԻ ԱՒՈՒՐ

ՅԵՆՈՒՆ ՀՕՐ ԵՒ ՈՐԴՒՈՑ ԵՒ ՀՈԳԻՈՑՆ ՍՐՈՑ ԱՄԻՆ

Հայր մեր որ յերկինս։

Աղօթք առ Հայրն երկնաւոր, ի բանից երանելւոյն Յովհաննու Գառնեցւոյ։

Արարչագործ աստուած և ամենակալ, որ յայսմ աւուր գթութեամբ կամացդ ժողովեցեր զմեզ որ ի վերայ երկրի՝ ի ևորս ծովու, և զատուցեր զցամաքն

'ի ջուրց. և զարդարեցեր զայն
զանազան բանջարիօք և ծաղ-
կատեղ վայելչութեամբ, և
ազգի ազգի պտղաբեր ծա-
ռովք. Խնկատուր երկիրս անձ-
նաւուր՝ մխոհանակ բարեբոյս
ածմանց առաքինադործ ար-
դասեաց՝ բուսուցիչ միութ-
մեղաց խոցոտիչ հոգւոյն ի-
մոյ, և մխոհանակ բերոյն
քաղցրութեան՝ պտուղս ա-
նօրէնութեան պառինս և
մահաբերս լինել գոյացուցի:
Այլ դու անոխակալ տէր՝
հայեաց քաղցրութեամբ առ
իս յարատած քո, և մի՛ան-

ահա առներ զգործս ձեռաց
քոց. իսկ ես յինէն զխուշս
չարեաց և զարդասիս անօ-
րէնութեան զոր ես ինձէն
պղտաբերեցի. և սերմանեա
վերստին 'ի միտս և 'ի կամս
իմ զբարին, և զօգտակարն
հոգւոյ իմոյ, յօժարիլ և
ընտրել զայն, և առնել կա-
մակար սիրով: Ընօրէնու-
թիւնք իմ յարձրացան քան
զգլուխս իմ, և տղմաշաղախ
ջուրք մեղաց ծածկեցին զան-
ձն իմ. և ահա առ քեզ առ
բարեգութ տէրդ իմ պաղա-
տիմ, երեւեցո զիսխիրև եր-

կիր ցամաք, և նորոգեա ըզ
սիրտս իմ քեզ ի պատուս քա-
րիս զկանուանն և զանապան
ըստ հաճոյից քոց մարդա-
սէր։

Ներկիրս բանաւոր՝ զոր զար-
պարեցեր քնաքոյս առաքի-
նութեամբ, ցամաքեցայ ՚ի
հրատապ հրապուրանաց իշ-
խանին օդոյս այսորիկ որպէս
դալարի ՚ի սաստիկ տօթոյ,
և թոռմատեցան ծաղիկք
հոգւոյս. գոսացան ոստք ա-
ռաքինութեան, և խամրա-
ցան բողբոջք բարեաց։
Եւ ահա կորացեալ անձամբ

առ քեզ աղաղակեմ պարգեւիչդ կենաց, ցողեա յիս զցող խնամոց մարդասիրութեան քո, զի չորացաւ որպէս խոտ սիրտ իմ, և որպէս խոտ սանեաց ցամաքեցայ. և նորոգեա զիս նորոգութեամբ շնորհաց քոյ ըստ առաջնումն պայծառութեան։

Ընդարձակ զիս այդի վայելուչ ցանկով օրինաց պատսպարեալ՝ առ ի քերել ողկոյզս քաղցրութեան՝ ի հաճոյս տնկագործողիդ իմոյ աստուծոյ. իսկ ես ապստամբ

կամօք աղհամարհեալ զօրէնս քո, խոպանայայ չարչարանաց դնացիւք, և պատրաստեցի խաղող գառնութեան ըստ մեղաց իմոց։

Եւ արդ մարդասէր հնարեցիր զթութեամբ, և դարման տար այգւոյս այսմիկ զոր անկեաց աջ քո, ամուացո զիս վերստին օրինօքդ կենաց, և՝ ի լաց արա զինէն զբաղձանս չարեաց ուրք ըստեղծին՝ ի կամս իմ։

Որպէս զի վաստակեալ յարգիւնս առաքինութեան՝ ար-

ժանիւ եղէց ընդունիլ զօրհնութիւն առ ինքեն և վայելել յանճառ բարիսդ ընդ սուրբս քո յերկինս, և զոհութեամբ փառաւորել զաստեղաշէն տէրութիւնն քո, յաւիտեան յաւիտենից, ամէն։

ԸՊՂՕՒԹՒՐ

ՀՈՐԵՔՐԻՍՏԱԹԻ ԱՒՈՒՐ

ՑԱՆՈՒՆ ՀՕՐ ՆԻ ՅՐԻՒՈՑ ՆԻ ՀՈԳԻՈՑՆ ՍՐՈՅՑ ԱՄԻՆ

Հայր մեր որ յերկինս ։

Աղօթք առ Հայրն երկնաւոր, ի բանից երանելւոյն Յովհաննու Գառնեցւոյ ։

Աստիչ ամենաւազօր լուսաւորացն երկնից, և ճարտարապետ ամենիմաստ տանն աշխարհի. որ յայսմ աւուր կորգեայեր զլուսաւորն ի հաստատութեան

երկնից՝ զարհուրակն և զլուռ-
սին և զաստեղացն պարա-
ւինչանս և ի ժամանակս և
յաւուրս և ի տարիս։
Ընդ ազաչեմ զքեզ աստ-
ուած կենարար՝ հաճոյա-
կան պարգեւօք հոգեձիր շը-
նորհաց քոց շարժեա զմիտս
և զկամս իմ սիրել զքեզ
յամենայն սրտէ, և ուղղեա
զընթացս անձին իմոյ ան-
հնարքելի զօրութեամբդ քում
գնալ անխոտոր ի ճանա-
պարհս հրամանաց քոց։ Կա-
պեալ կամ անզերծ շղթա-
յիւք յանցանաց իմոց, ա-

զատեա զնա ամենակար։ Ընկնել դանդաչեմ ի հաղբս կորատեան զաղանի որսողն, հան զնս բարեգութ։ Ի բանտ անելանել խաւարին զործոց կաշկանդեալ տանջիմ, ծագեա առ իս լոյս ջոյս շնորհիդ, և զերծ զնս խանամակալ՝ յազատութիւն կենաց անվախճանից։

Դու ես յոյս իմ և ապաւինութիւն. դու իմ փրկութիւն. քեզ ակնկալեալ ապասէ ամենամեղ անձն իմ։ Քեզ փափագի հոգի իմ ճաղատաբէր, որպէս փափա-

քի եղբերու յաղբերս ջուրց։
Ծարաւի եմ ողորմութեան
քուն, արբուր կին. տան-
ջեալ ի սուէ՝ յեղբերաց
խոզէցն կերակրիմ, կհաց դ
երկնաւոր ջամբեա ինձ։
Ա՛րուր դառնութեան մե-
ղաց եմ՝ հոգ արբեալ տադ-
նապիմ չքաւչար, զբա ճաշդ
կենաց մատուսակեա ինձ։
Ա՛երկացեալ դողամ յա-
նապուրջ աւազակաց իշ-
խանին մահու, զգեստուք
խնամոց քոյ ծածկեա կին։
Ա՛խտաւորեալ եմ ի թիւ-
նաւոր նետից աներևոյթ

թշնամւոյն բժշկեա զհարուածս իմ։

Եւ արա զիս զապահատաւոր ծառայս որ կարդամ առքեզ՝ արժանաւոր երկնային հարսնարանին և անմահական սեղանոյն՝ ընդ այնոսիկ որք սիրեցին զքեզ՝ ի բուռն սրտէ, և պահեցին ըղպատուիրանս քո. զի ընդ նոսին ւիաւաւորեցից զանմնագուեթ մարդասիրուեիւն քո, յաւիտեանս յաւիտենից, ամէն։

ԸՆԾՈՒՂ

ՀԻՆԳԵՐԱՒԱԹԻ ԱՒՈՒՐ

ՕԱՆՈՒՆ ՀՕՐ ՆԻ ՈՐԴՒՈՑ ՆԻ ՀՌՈՒԻՆ ՍՐՈՑ ԵՄԻՆ

Հայր մեր որ յերկինս ։

Աղօթք առ Հայրն երկնաւոր, ի բանէ երանելւոյն Յովհաննու Գառնեցւոյ ։

Որա բարձական գթովկհանդանածնես զարարածս քո և խնամես քաղցրութեամբ՝ աստուած իմ և տէր. որ յայսմ աւուր ամենակալ հրամանաւ քում հաներ ի

ջուրց զեռուն ընչոց կեն-
դանեաց, և զկէտս մեծա-
մեծս, և զթռչունս թևա-
ւորս. և աստուածային
օրհնութեամբ քով օրհնե-
ցեր զնոսա աճիլ և բազ-
մանալ 'ի վերայ երկրի:
Ընդ աղաչեմ զանիւսիւսե-
լի տէրութիւն քարերա-
րութեան քո, օրհնեա և
զիս զստեղծուածս ամենա-
կալ ձեռին քո ծննդաբեր
լինել գործոց առաքինու-
թեան: Եւ զսերմն հոգե-
ւոր կենաց՝ զոր անդստին
ընաւորեալ ես 'ի խորս մը-

տաց իմոց՝ զօրացո զիս աճե-
ցուցանել կենսաբեր խոր-
հըրդով ի ձեռն շնորհայ
և ողորմութեան քո, զոր
տաս ամենայնի և ոչ նա-
խատես. զի դու նոյն ես,
և ամք քո ոչ պակասին. բա-
նաս զձեռն քո, և լցուց-
անես զպէտս և զկարիս ամե-
նեցուն յանսպառ գանձուց
քոց: Ա՛ծողուր զիս տէր
իմ՝ ամուլ և անբեր գոր-
ծոց բարութեան. մի՛ ան-
տես առներ զտառապեալս
ի քոց խնամոց վասն բազ-
մութեան յանցանաց իմոց:

Խոնարհեցո զունկն քո և լուր ինձ . վի աղքատացայ ՚ի բարեաց . ստուգեցան ինձ կենաւրար պատուիրանաց քոց , և յօժարեցայ հաճել կամս անձին իմոյ :

Յարուցարերդ զիս տաճար կենդանի արարչութեան քում , և ես զանձն իմ պատրաստեցի բնակարան աւետեաց քոց պիւաց : Պատմուճան լուսազգեստ զգեցուցեր ինձ ՚ի հոգևոր ծընընդեան , և ես արկի զանձամբ հանդերձ խաւարի մեղաց և մահու : Ետուր

ինձ սիրտ մարմնեղէն խոկալ յօրէնս քո յամենայն ժամ, և ես ամանի խորհրդոց անօրէնութեան յօրինեցի: Պարգեցեր յիս լսելիս ի լուր պատուիրանաց քոց, և ես լայի առհրապոյրս բանսարկուին: Պատմեցեր յիս լեզու պօրծի օրհնութեան, և ես չարաչար վարեալ՝ արարի զէն անիրաւութեան: Ներմանեցեր ի միտս իմ սերմն բարի առաքինութեան, և ես փուշս դժնդակ մոլութեան բուսուցի ընդ այն: Ցաս-

ինձ զոր պարգևեցեր ինձ
շահիլ նոքօք կիեանս, ան-
մոռնալեամբ իմով վատ-
նեալ ի անոտիս՝ ստացայ
ինձ մահ և կորուստ: Տի-
րական իշխանութեամբ և
փառօք պատուեցեր զիս,
և ես կամաւ մատնեցի զան-
ձըն իմ ի ծառայութիւն մե-
ղաց:

Եւ այժմ առ քեզ ապաւի-
նեալ աղաչեմ թարեգութի՛
քաւեա զյանցանս իմ, և
Երկիւղ տէր՝ սրբեա զիս ի վտան զօրութեան հաւտի քոյ. և յամենայն չարեաց պատրաստեա: Հայր քո տէր յիսուս՝ զոր ես երկիրապագանեմ, եղիցի ինձ ի սիրելութիւն, կեանք, զէն յաղթութեան, և օգնականութիւն այժմ և ի հանդերձեալն. և քեզ փառք յաւիտեանս:

ԸՆԾՈՒՐ

ԱՌ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ

Ով ամենասրբուհի աստուածածին պարծանք կուսութեան, ճրագ պայծառադոյն քան զարեգակն: Ով ջահ փայլուն քան զոսկեղէն եւ զաստեղս: Ով ածուխ քերովբէական բարձրադոյն քան զերկինս: Ով սերովբէ հոգեղէն վեհադոյն քան զհրեշտակս, և պատուականադոյն քան զամենայն զօրս երկնաւորաց: Ով պարծանք կուսանաց և վարդ ամուսնացելոց:

Դու ես հարան անակընկա-
լանին. դու ես մայր մարմ-
նացելոյ վիաճնի որպէսզի
աստուծոյ. դու ես բնակա-
րան հոգւոյն սրբոյ:
Եւ հաճեցար աստուած
ընդ մարդկային բնութիւնն՝
որ մեղաւ. քեւ բացաւ իա-
կեաց դրախտին: Եւ
օրհնեցաւ երկիր յանիծից
նախահօրն. քեւ տնկեցաւ
քաղցրութիւն և ճշմարտու-
թիւն յերկրի:
Եւ ծառնեաք զաստուած.
քեւ անուանեցաք քրիստո-
նեայ. քեւ ընկալաք զատաշ-

խաղութիւն ի խաղութիւն
մեղաց: Ելել միայն տուաւ
համարձակութիւն բարե-
խօսել վասն ազգի մարդկան:
Ել որովայն աստուածա-
կերող մայր աստուածածնօղ:
Աստուածաշնչաւէտ ձեռն.
աստուածանգիտաց գիրկք.
աստուածատրէց ստինք.
աստուածաբարձ բազուկք.
աստուածամերձ բերան:
աստուածահամբոյր շըր-
թունք. աստուածահայեաց
աչք. աստուածախօս լեզու.
աստուածընկալ խորան.
աստուածարնակ տաճար:

Ի՛մ մտաւար վհատութեա-
նոցս քո, որք քեզ միտա-
ւորեն վհայր և զարդի և
զաւրդ հոգին՝ այժմ և միշտ
և յաւիտեան յաւիտենից,
ամէն:

ԵԼՈՓԻՈՒ

ԱՒԵՐԿՆԱՅԻՆ ՋՕՐՍՆ

Ուրբք և ախրեցեալք յա-
ճենաւորս երորդութե-
նէն, հոգիք հարկաւորք,
գաւրեկէլ, միքայէլ, ուրիէլ,
ռաֆայէլ, հրեշտակք, հը-

բեշտակասպետք , պետու-
թիւնք , իշխանութիւնք ,
աէրութիւնք , սերովբէք ,
քերովբէք , աթոռք , հրե-
ղէնք , ոգեղէնք , լուսե-
ղէնք , և այլ ամենայն դա-
սակարգութիւնքդ երկնա-
ւորք , որոց առաջի անկա-
նիմ և զարդարողին ձերոյ
տեառն աստուծոյ երկիր-
պագանեմ . և խնդրեմ ՚ի
ձէնջ հայցել ՚ի տեառնէ
զթութիւն յանցանաց և
զքաւութիւն մեղաց իմոց .
քանզի ձեզ տուեալ է հա-
մարձակութիւն վասն ա-

բնաստուերեան ամենայն մեղաւորացս:

Դուք սուրբ էք՝ և առաքենաստուրբեան ծոռակացք. դուք անմարմինք էք և անմեղականք, իսկ ես մարմնաւոր եմ և մեղանչական. դուք անմահ և՛ երջանիկ կեաք, իսկ ես մահկանացու և խաւարաւ մեղաց ծածկեալ. դուքթեմեմ ընթացք և քան զմիտս երագուն, իսկ ես ծանրացեալ մեղօք և զառածեալ յանցանօք: Վ՚աւրոյ՝ աղաչեմ զձեզ աղաչեցէք վասն իմ զտէր,

և հայեցէք զթողութիւն
բաղում յանցանաց, քան-
զի յօժար է ի մերկութիւն
կորուսելոյս. մի՛ անփոյթ
առնիցէք զխնդիր տարա-
կուսելոյս, այլ միաւորեալ
զաղաչանս մեղուցելոյս ընդ
ձեր ամենաւաքուր մաղթա-
նացդ՝ մատուցէք խնդրողին
զկորուսանեալս, զի միակա-
մեւամբս իմով ուրախու-
թիւն արասցէ ձեզ տէր ի
յերկինսդ. և ես ձեր միջ-
նորդութեամբ արեցայց ի
մեզաց և ազատեալ յամե-
նայն յանցանաց՝ միաւոր-

բեցից ընդ ձեզ զամենաօրեայ երանութիւնն ըզ
հայր և զորդի և զսուրբ հոգի. այժմ և միշտ և յաւիտեան յաւիտենից, ամէն:

ԵՒՕԹ

Մեծապայ վարդապետին վանականաց:

Ի՞ուաջնորդ կենաց և ճանապարհ ճշմարտութեան տէր մեր Յիսուս քրիստոս, որ առաջնորդեցեր յուսէ-լիս յերկիսպատս, և խոստացեալ ընդ ծովն կար-

մի՛ր , և մոխեսի՛ ի լեառն սինէական , և ժողովըեան յերկիրն պարզևաց , և կղէօպեանցն ճանապարհ-

կից եղեր յեմաւուս :

Ընաչեմ զքեզ տէր՝ առաջնորդեա ինձ և եղբարց իմոց դնալ խաղաղութեամբ վառաջիկայ ընթացս . փըրկեա յերևելի և յաներևոյթ թշնամեացն . և յարի առաջնորդեա ի դէմ եղեալ տեղին . զի դուս ես ճանապարհ և ճշմարտութիւն և կեանք եր . այժմ և միշտ և յաւիտեանս , ամէն :

ԸՆԾՈՒՐ

Յորժամ յոտոդայիմ անկանի
ոք, Առաջեալ ի սրբոյն Գրի-
գորի մերոյ լուսաւորչին։

(Օրհնեալ է մարդասիրու-
թիւնդ քո տէր իմ և փըր-
կիչ իմ ես. դու միայն ես
առանց մեղաց. և անուն
քո զանոխակալութիւն և
զմարդասիրութիւն ցուցա-
նէ. զեթա յիս՝ վասն զի
դու ես միայն մարդասէր։
Ապեցո զիս զանկեալս ի
մեղս. զի դու ես միայն ա-
ռանց մեղաց։ Լան զիս ի

տղմոյ անօրէնութեան իմոյ, զի մի՛ ընկղմեցայց յաւիտեանս յաւիտենից։ Թո՛ղեա զիս՝ ի թշնամեաց իմոց. քանզի ահա երթամ զառիւծ գոչէ և մռնչէ կամելով կլանել զիս։ Ո՛րդե՛ր էր իմ իմպատակեա զկ ծանեա զզօրութիւն նոցա. երկիցեն և խաւարեսցին յերեսաց քոց. քանզի անկար է և ոչ ունի զօրութիւն կալ առաջի քոյ, և ոչ առաջի երեսաց սիրտացդ քոց։ Տեսանէ զզօրութիւն նշա-

ի խաչի քոյ տէր՝ և պատ-
հուսի. և ամաչելոյ ի բաց
հեռանալ յայնցանէ՝ որք
կարդան առ քեզ:
Ընդ ամէն կեցո և ապ-
րեցո զիս, վասն զի ի քեզ
առաւխնեցայ. Հան ի նե-
ղութենէ զանձն իմ, զի մի
խափան կորուսցէ զիս նեն-
գաւորն՝ որ մատնչէ ընդիս
ծածուկ հնարիւք: Որ խոր-
հըրդոց ես տէր, և քննես
զմտաս և զերիկամունս,
սրբեա զիմրտս իմ և զխոր-
հուրդս ի սատեր և ի սիրտ
խորհրդոց. զի մի խոպան

կրեայց ՚ի յաւիտենական
կրուսան: Որ կարողէ ա-
մենայնի, ողորմեա ինձ աստ-
ուած իմ. տուր ընդհ ար-
տասուաց մեղուցեալ հոդ-
ոյս, որպէս զի լուացից
զբազմաւթիւն մեղաց. զի
ապրեցայց ՚ի ձեռաց անո-
ղորմ հրեշտակաց՝ որ ար-
կանեն զամբարիշտն ՚ի հուր
դեհենին. երանի թէ լայի
հանապազ ապաչելով զքեզ
աստուած, զի մի անտրժան
դատաց ՚ի ժամուն յորժամ
պայցես. և մի լուայց զա-
հաւոր զձայնն զայն, թէ

երթ ՚ի բաց միաւորդ անհաւատութեան ոչ գիտեմ ուստի ես:

Ընտրած բարձրեալ միայն առանց մեղաց, ընտրեա ինձ մեղաւորիս յաւուր յայնմիկ զբաժդում գթութեան քո. զի մի՛ յայտնեսցին ծածուկ ամբարշտութեանք իմ. առաջի տեառն պաղատեցայ հրեշտակաց և հրեշտակապետաց, մարդարէից՝ առաքելոց և արդարոց սրբոց: Նոյն ապրեցո զիս զամբարիշտս ընտրօքդ ողորմութեան քոյ. ընկալ զիս

'ի դրախտն միաիկուԹեան
ընդ կատարեալ արդարսն .
ընկալ զաղօԹս մեղուցեալ
ծառայիս քոյ բարեխօսուԹեամբ սրբոցն որք հաճոյ
եղեն քեզ, Յիսուս քրիստոս տէրդ մեր. և քեզ ընդ
հօր և սուրբ հոգւոյդ միառք
յաւիտեանս յաւիտենից ,
ամէն :

ԵՊՕՔ

Վասն կատարման տխուց և կա-
խարդաց աղանդաւորաց

(1) Աղաւոր Հզօր ապաւէն
ծառայելոց՝ միրկիչ նեղե-

լոց՝ որ վասն մեր խոնար-
հեցար ՚ի հայրական ծոցոյ
և առեր մարմին ՚ի սրբոյ
կուսէն մարիամայ . վասն
մերոյ փրկութեան մատնե-
ցար , լմբռնեցար , չարչա-
րեցար , խաչեցար , թաղե-
ցար՝ և յարեար ՚ի մեռե-
լոց՝ և համբարձար փառօք
առ հայր : Օ՜ արթո զքրիս-
թիւն քո և ակ ՚ի կեցուցա-
նել զքինս արևան քո տէր .
և մի՛ տար զերծել սատա-
նայի զքո փրկեալքս , և մի՛
տար բնակութիւն չարին՝
զտաճար անուանդ քում

սրբոյ · այլ գթա՛ի քո ա-
րարածս արարչական սիրով
քո , և ողորմեա մեզ , զի
՛ի լսաչ քո պարծելով պար-
ծեցաք · և միրկեա զմեզ
յաներևոյթ չար դժնդակ
դնւոյ , և՛ի խաբեբայ և-
ղեռնական գործոց կախար-
դաց · և քեզ միասք յաւի-
տեանս , ամէն :

Ձայր իշխանքն հալածին ,
ոյք ընդ ծառայո քո մար-
տընչին . երեւելով նշան
խաչին , աներևոյթքն կոր-
ծանեսցին :

Ի բանից սրբոյն Գրիգորի Նա-
րեկացւոյ՝ ընդդիմամարտս դի-
ւաց այս նուաղ աղօթից, և
դիւահարսուս ջերմեռանդապնդ
ախտաւորութենանց՝ Ասուծով
փարատիչ։ Ամն. ԻԸ։

Ե՛ր այսքանեաց անբաւից հրաշից հանդերձիչ
հայր ամենասուրբ՝ անուանդ
ահաւոր, ձայն սարսափելի
կոչումն ընտանի, բան համ-
բուրելի, ազդումն սքանչե-
լի, հրաման սոսկալի, էու-
թիւն անքննելի, գոյութիւն
անճառելի, իսկութիւն ան-
բաւելի, զօրութիւն ան-

զննել, կամք ամենաբարի, տէրութիւն անսահմանել, մեծութիւն անչափել, բարձրութիւն անբոլորակել, որքանութիւն անկշռել, առաւելութիւն անհասանել, պատճառ որդւոյ հայրութեամբ. քեւ, և՛ի ձեռն քոյդ անպարագիր զօրութեանդ սաստեաց տաղնապող և դիւականն տենդիս ջերմութեան, որ սպրդեալ մուծաւ ընդ մեզս, զի փախիցէ՛ ի մարդոյս զարհուրեալ՛ ի խորհել և յանբաւե-

լի աւետան վտակի գառինդ
երկնաւորի, որով սրսկեալ
միանգամ ՚ի մշտնջենաւորս
համայն մաքրեցաք։
Զ. Ն՚ւ արդ յայտ պատ-
կառելի խոնարհութենէ ա-
մաչեցէք սատանայ ՚ի գոր-
ծս. չարեաց իւրոցն հրեշ-
տակաց, տանջեցի և հա-
լածեցի, հեռացեալ և ար-
տաքս աւաքեալ ՚ի հինաւա-
ծոյ խորանէ քումէ բնա-
կութեան յարտաքին խա-
ւարն։ Ն՚ւ ջնջեալ մաքրու
զարտասուս ողբոց ՚ի դէ-
մաց մերոց, և զհառաչուն

ձայնիս հեծութեան ՚ի սըր-
տից մերոց: Եւ յիշատա-
կաւ հարման հեղուսից
քաոմնեաւիւրուշ արժանաւո-
սիլ ողեպահանջից, որում
պնդեցաւ մուածինդ քո յաշ-
տարակ լաւլին, ցաւեացէ
չարին: Եւ ՚ի կողաՀերձ
սայրատուր սլաքէ ուժդին
բախմանէ, որում գվէրն
մեծ ընկալաւ, ՚ի սպատ սա-
տակեացի սկզբնարար մա-
հուն: Եւ զի խոնարհե-
ցոյց զգովեանն գլուխ յա-
ւանդել զոգին ՚ի ծոց քո
բարձրեալ, ապստամբու-

թիւն բարուցն Բնկլիսարայ
՚ի կոր կործանեսցի, ամե-
նայնիւ հեղբեալ ՚ի կորուստ:
Եւ զի ղօղեալ ծածկեցաւ
անմահն իակուեթիւն յորո-
վայնի երկրի, այսու ամ-
բարձեալն հպարտութիւն
կարծեալ գոռոզին ՚ի յա-
տակս մահու դժոխոց մը-
թին ստուերին յառեալ
դիտեսցէ. և յիշեսցէ զա-
ռաջին հարուածն անմժըշ-
կական, որով մահացաւ
դիմամարտութիւն թիւնից
վիշապին կենարարն կրիւք
ամենազօրին: Վասն զի ՚ի

փառս քո, Հայր ողորմութեան, եւ զի գովեստ որդւոյ քո հոգւոյդ սրբոյ զայս խոստովանիմ. քանզի ոչ պիտակ ինչ սոսկ զօրութեան ունի զմիւսմէն առ մի ներհրդականն խաղութեան, այլ զանսկիզբն բանդ անձնաւոր ընդ անժամանակդ Հօր փառաւորեմք: Եւ քեզ միայնոյ սուրբ երրորդութեանդ, Հաւատարմապատիւ տէրութեանդ: Համաբուն անբաժին ինքնութեանդ. օրհնաբանութիւն, գոհութիւն, զօր-

զութիւն և անճառ վայել-
չութիւն մեծութեան, լա-
րեալիճակ հարթութեան,
զուգակշիռ հաւասարու-
թեան յաւիտեանս. ամէն:

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ

ԽՕՍՔ ԲՆԻ ԸՍՏՈՒՈՑՑ

ԲԱՆ Գ.

Ա. Ի բարեբանեալ աստ-
ուած երկնաւոր, միայն ա-
րարիչ, տէր ամենակալ, մե-
ծութիւն ահեղ, գթա-
թիւն օրհնաբանելի, ողոր-
մութիւն խոստովանելի,

բարերարութիւն երկրպագել, խնամակալութիւն պաշտելի, մարդասիրութիւն տունելի, պահպանութիւն խնկելի, բարձրեալ անքնին, մերձաւոր կամարար, ապաւէն անկասկած ելի, ամենազօր սրտից, փարատիչ վշտաց, ապաքինիչ ցաւոց, սպառուածն վհատութեանց, բարձուածն պարտեաց, փոխարկիչ կարեաց, կարգաւորիչ կրից, յարմարիչ բանից, սանձարկու լեզուի, ջրջադրութիւն շնչոյ, կացուցիչ հա-

գազի, ամխումիէ խորհըր-
դոց, կրթարան կամաց,
արձանացուցիչ յուզմանց,
հանդարտութիւն մրրկաց,
խաղաղութիւն ծփանաց, որ
ունիս զթևոց ամենընթաց
իշխանականիս, և համաս-
տութեամբ նուաճեալ առ
քեզ զարձուցանես:

Բ. Վոհաբանեալ միշտ ե-
րանաւոր, որ հեզու-
թեամբ անհպարտութեան
երկայնամտեալ հանդիպիս
ոեռնչանօք անձառ հրաշիւք
յանձինս սրբոց: Վոտքաւոր
էից համաձայնից, ամենայ-

նիւ ծանուցեալ գթած .
սկզբնահայր և նախաշաւիղ
սիրոյն ընթացից . ճանա-
պարհ կենաց , որ առաջնոր-
դես քաղցրութեամբ դի-
մելոյս ՚ի լոյսդ վերին : Ձե-
ռընկալու մեծ վստահու-
թեան , որ ոչ թողացու-
ցանես դայթակղելոյս ՚ի
վայր կործանել . յուսոյ
կերպարան , ճշմարիտ առ-
հաւատչեիւ աղաչողաց մա-
տանց յայտնի երևեալ . ա-
պաւինութիւն հանգստեան ,
որ ոչ երբէք մատնես վտան-
գի դատապարտութեան :

Ընդատուելիւն ընդհանուր, որ տուաս լինալէս առանց ինոհատրուելեան իրկանայ. առատուելիւն անհնարանձելի, որ քոյին միատուրելեամբ զանարդ նիւթ հողոյս ճոխացուցանես։ Պայծառուելիւն անստուեր, որ ճառագայթիւք ահեղ բարձրուելեան պարածածկեալ զիշուառս՝ կրկին բարգաւաճ առնես։ Վասն իւր մեղանաց բազմաց, որ ըզ հեղբեսալս ի միրկուելենէ առաջնոցն պայծառուելեամբ նորոգեալ՝ վեհստին վայել-

ջացուցանեա։ Նարաւուր
դիւրահաս առ ամենայն ան-
բաւ գերամբարձութիւն
յաւէտ յառաջեալ, եւք
վստահութեան առ խոստա-
ցեալսն վայելս. երանու-
թիւն անձկալի, յոր գկեն-
դանութիւն ընդայս լքանելն
ի ախորժելի, զի զքեզ գը-
տից՝ կենդանի։ Կամք ան-
փոխապրելի առ՛ի քաւու-
թիւն գերուոյս զօրացեալ
ամենազօվելի. անսխալելի
դեղ կենաց, որ և մեռելոց
բնաւին եղծելոց առնես
զսքանչելիս։ Ամենաստեղծ

աներկբայելի , որ զՀուրբ
հիշեալն և զՀոգմով հո-
սեալն և զժանեօք գայլա-
նաց ծախեալն ՚ի քթթել
ական նովին հիւթակա-
նութեամբ անպակաս յա-
րուցանեաւ ընդհատասարհա-
մարձակութիւն , յորում
աստուածօրէն պանծանօք
պարծելն ի իրաւացի :

Գ. Այեաց , տէր , յերկնից
զուարթ քաղցրութեամբ
յամենակործան վտանգնե-
ղելոյս , և արա անդորր հան-
գըստեան դիւրաւոր ՚ի բազ-
մատագնապս հեծութենէ ,

Եւ զյարուցեալ գումարս
սատակչացն , եթէ սպա-
ռազէնք այսական դժնեայ
հնարաւորութեան բուռն
մարտակցաց պատկանեալ
զինուք, եթէ մեղաց տգեղ
և քո ատելի կերպարանք ,
եթէ ցաւոց և ախտից վատ-
նիչ և կորստական նշմա-
րանք , մերժեացես հանցես
հատցես խափանեացես և
հալածեացես հեռի սահ-
մանաւ 'ի սպառ տարապրեալ
անդարձ ոյժմամբ վերստին
կորստեան . և կառուսցես
կացուսցես նպատակ կենաց

և ամուր մահարձան զնշան
խաչիդ ապաւինելոյս ՚ի քեզ
փրկութիւն: Եւ յայսմ
անպարտ և. անպատիր և ան-
վանելի արուեստից ահա-
ւորիդ մեծութեան լուծ-
ցին որոգայթքն գաղտնա-
ծածուկ սատանայականք,
կապտեսցին մեքենայքն,
վատնեսցին դայթակղու-
թիւնքն, խայտառակեսցին
հաղբիցն դրուժիւնք, յայտ
նեսցին երևոյթք որսոյն,
գոցին նենգողին ծուղակք,
վերասցին վարմին վերար-
կուք, տոչորեսցին որոմանցն

թոյսք, նզովեսցին քոնաւո-
րին չարաբանութիւնք, կըտ-
րեսցի լար խաբէութեան
'ի մահ որթողին, պարսեա-
ցին պատրողին քանսարկու-
թիւնք, պակասեսցին զէնք
զրպարտողին, անկցին սու-
սեըք մահաբերին, սուզեա-
ցին սադրողին պատրաս-
տութիւնք, արձակեսցին
տոռուն տագնապողին։
Ո.յլայլեսցին սուտ կերպա-
րանք կեղծաւորին, սատա-
կեսցին խրոխտականացն
խիստ յարձակմունք, ցըր-
ուեսցին կցորդութիւնք

կերչացն, բաժանեսցին ա-
զինք աւազակացն, քայքա-
յեսցին բոլիք բարբարո-
սացն, քանդեսցին ամրոցք
ապստամբողացն, արդել-
ցին ամպրոպք յանդգնե-
լոցն, փարատեսցին փորձո-
ղին անձրևք, հալեսցի և
ցամաքեսցի եղեամն աղան-
դաւորին: Խորտակեսցի եղ-
ջիւր գոռոզին, մանրեսցին
ամբառնալիք դրոշին կեր-
պարանաց, փշրեսցին ամ-
բարհաւաճութիւնք հպար-
տացելոցն, նահանջեսցին
դիմեցմունք ճակատելոցն,

քակտեսցին միաբանու-
թիւնք զօրացն Բելիարայ՝
թէ անմարմինք և թէ մարմ-
նաւորք, փախիցեն ընդ նոյն
ճանապարհ՝ ի մի շաւղաց
հետոց յեօթն տարակոյս.
՚ի գուբն ինձ փորեալ ին-
քեանք ընկճեսցին։ Յեղա-
նակեսցին ձմերուունք ձանձ-
րացուսցէին, հատցի կապն
կցորդութեան մշտաջան ա-
ւազակին, նողկասցի մտացս
կայից համբոյր շողոքոր-
թին, ընդմիջեալ մեկնեսց-
ցին նեռատգութիւնք նեղ-
չին, կապեցէ ՚ի սասանման

նաև խարդախողին, խլեա-
ցին յարմատոց անտի ատա-
մունք խածանողին:

Դ. Ա՛ման ինայտիդ օրհնու-
թեան կենաց՝ յորում պըր-
կեցար աստուածդ անըմ-
բռնելի, յիշատակաւ բե-
հեռացդ՝ որով՝ ի գործի մա-
հուն մածուցար արարիչդ
երկնի և երկրի, արեամբդ
տէրունականաւ՝ որով զլի-
շապն մեծ կարծիւ ածեալ
որսայար, լեղւոյն դառնու-
թեամբ՝ զոր արբեալ զդե-
զատութիւն կորուսչին
արտաքս հեղեր, պատմա-

բանութեամբ ըղձական ձա-
ռիւք կրիցն սարսափելեաց՝
որով զլրբութիւն հակա-
ռակողին ըմբերանեալ ա-
մաչեցուցեր , անուամբդ
անհասականաւ ամենայնիւ
անթարգմանելոյդ՝ յորմէ
դողան և դատապարտին
սոսկացեալ սաստիկ սար-
սաւիմամբ բնութիւնք ամե-
նայն երևութից և աներե-
ւութից , եղիցին այս ամե-
նայն պարգեւք շնորհաց խոս-
տովանելոյս ի պաշտպանու-
թիւն , ի բժշկութիւն և ի
քաւութիւն։ Եւ մահաբեր

դառնաթոյն օձին, և որ՝ի նմա ազդեաց տիեզերադաւ չարութիւնն, ՚ի սատակումն եղելի նորին. նոյն ինքն՝ի կորուստ և յանբժշկական հարուած տանջանացն սոսկալ մատնեսցի, կապեսցի և ըմբռնեսցի: Եղելի ողորմելիւն ստեղծողիդ ընդ իս, և շունչ ոգւոյս իմ ընդ քեզ անբաժանօրէն կապաւ միացեալ ՚ի մի:

Ե. Եւ որոք ընթերցցի զայս աղերս ձայնի մաղթանաց գոչման աղօթից հայցման ծերոյ և տղայոյ, կուսի և

երիտասարդի , և եթէ յա-
ղախնաց ոք պաղատեսցի
աստուածսիրաբար , հաւա-
սարապէս անաչառութեամբ
ընկալցին ի քէն մասն ե-
բանութեան պարտուց ա-
զատութեան , հաստեալ
վերստին յանարատութիւն
նորոգ մաքրութեան . նկա-
րեալ դարձեալ զքոյդ կեր-
պարան անխոտիտելի : Ո-
հա տիրապէս հնարաւոր ,
զօրեղ , անպատում , ան-
հաս , անիմանալի , տեսցես
աստանօր ի հատաչանս կող-
կողանայ այսր հեծութեան ,

որ ՚ի բոլորից չորեանց կո-
ծայեալ քեզ մատուցանի ,
վասն հօր քոյ երկնաւորի և
բարերարի , և հոգւոյդ
սրբոյ փառակցի և կենդա-
նատուի , աստուածածնիդ
բարեխօսութեամբ և խըն-
դրուածովք ամենայն սրբոց:
Ո՛ի դու ստեղծեր զամե-
նայն , և ՚ի քէն եղեն ամե-
նայնք , և դու տիրես ամե-
նայնի . և քեզ փառք յա-
ւիտեանց , ամէն յիսկու-
թենէ անժամանակ երրոր-
դութեանդ զուգակցապէս
փառաւորեալ յանբաւս , և

յաւիտենից յաւիտեան ,
ամէն :

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ

ԽՕՍՔ ԸՆԴ ԷՍՏՈՒԽՈՑ

ՐԷՆ Գ.Է.

Ա. Տէր տէր գթութեանց
և ողորմութեանց,
անուն մեծութեան , ձայն
ահաւորութեան , կոչումն
սաստկութեան , լուր ան-
հասութեան , բարբառ
դողութեան , հնչումն հի-
ացման , յուսադրութիւն
բարեբարութեան ամէնո-

ղորմ քաղցրութեան, յոր-
մէ երկուցեալ սասանին ա-
ձենայն բնութիւնք եղելոց
'ի քո սպառնալեաց ահիդ
պակուցման, սաւառնին սե-
րոբէք, ամիսուիին քերու-
բէք, պարուրին պարք լու-
սակերպիցն, երկնչին հի-
ացմամբ բոլոր պետութիւնք
վերնոցն, նոյնք ցնծան դո-
ղութեամբ մեծաւ 'ի մի նա-
ւակատիս բերկրութեան,
զարհուրին դևք, ընկրկին
չարութեանցն գունդք, պա-
կասին խաւարասիրացն հո-
գիք, անդնդոց մատնին հլ-

րեշտակք օտարին։ Կապին նշանաւ խաչին յարձակմունք դիմամարտին, փակին ՚ի ստորին բանտի քինաւոր ամաղեկացիքն, անխզելի հանգուցիւք պաշարին խումբք հակառակորդին, արգելին անզերծ զընդանաւ՝ մահազինացն կաճառք, պնդին ՚ի մետաղս ահեղ հրամանիդ այսակացն գումարք, պատանձին կարկեալ ընդդիմաբանիցն դասակցութիւն, պարանդին հիւծմամբ կորստեան անելևութիցն ժո-

ղովք , անլոյծ շղթայիւք
նեղին առաքելութիւնք դե-
րաքրիստոսին :

Բ. Ընդ այս կարկառեմ մա-
տամբք ձեռինս զտեառնա-
գրութիւն նշանիդ ՚ի ժամ
գիշերիս , որ ոչ միթանաս
խաւարաւ անգիտութեան ,
ամենևին տեսականութիւն ,
քան թէ ՚ի լոյս անմատոյց
հանգուցեալ բնակես : Ընդ-
կալ զաղաչողս վտանգաւոր
գոհարեան ընդ պահպանու-
թեամբ թևոց հզօրիդ ,
փրկեա ՚ի ցնորից եկամուտ
պղտորութեանց , սուրբ ա-

րա զշխայարան հայելեաց
սրտիս նկատմանց . ամրացո
փայտիւդ կենաց ՚ի տխրա-
կան անրջոց , արեամբ քո
սրակեա զջրջարկութիւնս
կայից , զհետս եղումտից
կաթուածով կենարար կո-
ղիդ դծագրեա . երգեցն
պահպանարան քառակեր-
պիդ ձևակերպութիւն ե-
ղիցի , հանդէպ տեսութեան
աչացս ամբարձման փրկա-
կանդ քո կրից խորհուրդ
առդիցի , ընդ բարեաւորյար-
կիս չարչարանաց քոց գոր-
ծի հաստիցի , զծառդ օրհ-

նուէրեան հաւատք յուսոյ
իմոյ կախեսցի: Ընդել,
տէր, սովաւ զաստակիչն
հոգւոց, մոցէ անխաւխան
պաշտպանն լուսոյ, և ընդ
աստիճ ծանրութեան ցա-
ւոցս և զբեռն պարտեացս
թեթեւացո, զոր ի լուարանի
մտացս ամխուիման մահ-
ճացս անկողնի ուշաբերեալ
զյուսահատութեանցն դա-
ռըն պտղոցն՝ խոստովանիմ
ամենագիտիդ զանհամար
մասունս գործոց չարաչար
անօրէնութեանցս:

Գ. Ընդ զվաստակեալս

'ի բազմաձուխս աշխատու-
թենէ բարձ զտապնապ տա-
րակուսանաց ոդւոյս կոր-
ծանման զդատուներն ընդ
վշտացն, զհնձուներն ընդ
կարեացն, զանձկուներն
ընդ թշուառութեանցն, զզ
հառաչմունն ընդ խորտակ-
մանցն, զբեկուներն ընդ
ապշութեանցն, զթմրու-
թիւնն ընդ շրտմանցն, զար-
բեցուներն ընդ յիմարու-
թեանցն, զթերամտուներն
ընդ խելագարութեանցն,
զսաուսմն սիրոյն և զհրա-
յին ջերմուներն աղուա-

կան ախտին : ( )ժանդակլեր տկարութեան բազմատրախուրս տարտամութեան , բարեգործ աջովդ ընդհի , ձեռամբդ նորոգողէ , մատամբդ կենսաբաշխի , միաձօքդ մշտափայլէ , յարատկայութեամբ անեղծի , երեսօքդ զուարթականի , իակութեամբ էիդ պաշտելի , բարձրութեամբդ երկրպագելի : Ա՛ստո զչարաչար հեծութիւն կրստականս խեղդման , զնոր գիւտ չարին , զհին խարդախութիւն բանսարկուին , զօտար ազ-

դեցմուն 'ի մահ կրթողին, զանյարմարական երևոյթս հանապազորդեան եղեռնագործին, զառաչս հնադարձութիւնն դժնդակ դիւին, զողբական քոցաշնչութիւն ձգող կախարդին: Պահ 'ի տեղւոջ հանգստեան մեռօրինակ այսր դադարման յանէրևոյթ մտածութեանց, 'ի մասնաւոր սխալութեանց, 'ի մեծագոյն գայթակղութեանց, 'ի փոքրագոյն ոտնաւորութեանց, 'ի խաբեբայ ձայն ձանձրութեանց: Ձեռացո զանհան-

դէպ մտածութիւնն ի զգայութեանց ծառայիս յանցաւորի, զկիրս բաստելիս, զվարս թշնամանելիս, զդիպուածս պատկառելիս, զհետս վրիպելիս, զպատիրս ձաղելիս, զխորհուրդս անգոանելիս, զաւելաբանութիւնն նշկահելիս: Ընդսայլ հոգւոյ և անշաղախ մարմնով զապաւինեալս ի քեզ հանդերձեա, ի շնչմանէ հողմոց, ի զարկմանէ բրունութեանց, ի բախմանէ փոթորկաց, ի յոստմանէ մրրկաց, ի յարձակմանէ գա-

զանապ։ Ի կարիման աչացս հայեցուած արտիս մի՛ ըստ-ուերութեացի , այլ զուար-թասցի պայծառասցի վա-յելչասցի՝ ընդ քեզ փայլեա-ցի , տէր Յիսուս Քրիստոս , լուսաւոր վառմամբ անշէ-ջանելեաւ ։ Հանիւ քո սըր-բեա զպատսպարանս բազ-մականիս ՚ի խորամանկու-թեանց , ՚ի զբաղմանց , ՚ի .քո ատելի յիշատակաց , ՚ի վերնամարտ մտածմանց , ՚ի քրէական մորոսուրթեանց , ՚ի տիրանեանգ անշնորհու-թեանց , յաստուածընդդէմ

հերձուածոցն։ Կընդիւք վերնայնոցդ վերակացու ինձ լիցիս, պետութեամբք, իշխանութեամբք զօրաւորօքն անյաղթականաց մարտուր մատակարարաց սուրբ աստուածոթեանդ. առաքեալքն աւետեաց աւետարանաւն, մարգարէքն կատակարանօքն, մաղթանք երջանկացն՝ի կատարածի աւուրն ընծայեալ։ Որովք նիրհեցից երկիւղիւ քոյ քեզ տրտմութեամբ, և զարթեայց շնորհօք քո կրկին ուրախութեամբ, եթէ

վՀատուԹեամբ ննջեցից ,
յարեայց դարձեալ Հոգե-
ւորական բերկրուԹեամբ .
եԹէ ընկողմեցայց մեղա-
նօք , կանգնեցայց վերստին
զատեալ ՚ի խղճէ անապատ
անբծուԹեամբ :

Ե. Լուր խնդրուածոյ ա-
մենահատաչ ձայնիս Հե-
ծուԹեան , միայն բազմա-
գուԹ , բարեխօսուԹեամբ
սրբոյ աստուածածնիդ և
ամենայն արդարոց և նա-
Հատակաց ընտրելոց : Ն-
քեզ փառք յամենեցուն
իմովս գոչմամբ վերաւա-

քեցեալ սրբովք զուարթնոցն անմահականաց դասուց, ի գովեստ հօր քոյ աստուածոյ մերոյ և հոգւոյդ սրբոյ քնաւից հաստողէ և նորոգողէ, յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ

ԽՕՍՔ ԲՆՒ ԱՍՑՈՒԾՈՑ

ԲԱՆ Գ.Ե.

Ա. Երեգական արդար, ճանապագայթ օրհնեալ, լուսոյ կերպարան, փառաւք անճառելի, բարձրեալ ան-

քընին, զօրեղ անպատում, բարեյ բերկրութիւն, յուսոյ տեսութիւն, գովեալ երկնաւոր, թագաւոր փառաց, քրիստոս արարիչ, խոստովանեալ կեանք: Եւ արդ զթերութիւն վրիպանաց բազմասխալ ձայնի եղկելոյս ամենազօրդ բանիւ լցեալ մատուսցես յաղերս հաճութեան հօր քումմ բարձրելոյ: Որ վասն իմ՝ ի փորձ եկիր անիծից, կերպարանեալ զիմ նմանութիւն, ամենևին կենաց օրհնութիւն, վերնոյ և

ներքնոց բարեխնամող տե-
սուչ հաւատոյ։ Օվ թէ
յանձն առեր մեռանիլ վասն
իմ, աստուած և տէրդ քո-
լորեցուն, որչափ հաճես-
ցիս առաւել և այժմ վը-
տանգաւորս կրից կարեկ-
ցել, ընդ իմ պարտաւորիս
միշտ աղօթելով ազգակցաւ.
մարմնոյդ առելոյ՝ ի մէնջ
առ համապատիւդ քո հայր։
Բ. Նա վասն արեանդ պատ-
ուականի միշտ մատուցելոյ
՝ի հաճութիւն կամաց ա-
ռաքելոյդ՝ բարձցին վտանգք
մեղուցեալ դատապարտե-

լոյս , Թողցին պարտիքն , ապաքինեցի ամօթն , մոռացին պատկառանքն , բարեգործեցին դատակնիքն , սատակեցին որդունքն , վերասցի լալն , հանդարտեցաւ կրծուածն ատամանցն , սպառեցին ողբքն , հատցին արտասուքն , մերժեցի սուգն , հալածեցի խաւարն , վաստնեցի հուսն աստուածեան , հերքեցին տանջանարանքն բազմօրինակք ։

գ. Նկեցեն գԹուԹիւնք կամողիւ և պարգևողիւ կենաց ամենից , ծագեցի

լոյսդ, արագեսցէ փրկու-
թիւնդ, հասցէ օգնու-
թիւնդ, ժամանեսցէ այցե-
լութիւնդ, կանխեսցէ ցօղդ
ողորմութեան, յառաջես-
ցէ արբուսցէ զանդաստանս
պասքեալ՝ անկեալ ոսկե-
րացս թշուառութեամբ ՚ի
վիհն մահու. ծաղկեցուս-
ցէ պտղաբերեսցէ բաժակդ
երկնաւոր արեան կենարա-
րիդ զերկիրս խնամեալ ա-
ւուրն լուսոյ, որ անծա-
խապէս մշտ պատարագի
յիշատակ կենաց փրկու-
թեան հոգւոց ննջեցելոց:

Ո՛վ ամենայնիւ մահացեալ հոգիս մարմնովս մեղաց՝ ընդհօք քո, դթած, ի՛ քեզ զօրացեալ քև նորոգեցայց, զատեալ ի՛ մեղաց անմահ կենդանութեամբ ի՛ յարութեան արդարոց, հօր քում օրհնեցեալ, ընդ որում քեզ միաոք, և հոգւոյդ սրբոյ բարեբանութիւն վայելչական գոհութեամբ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն.

ՍՈՒՐԲ ԱՒԵՏԱՐԱՆՆ

ՈՐ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ

Եւ ՚ի ժինչդեռ անցանէր ընդ
այն Յիսուս , զՀետ եղեն
նորա Հոյլք երկու , աղաղա-
կէին՝ և ասէին . ողորմեաց
մեզ որդի դաւթի : Եւ ի՛բ-
րեւ եկն ՚ի տուն , մատեան
առնա Հոյլքն . և ասէ ցնոսա
Յիսուս . Հաւատայք՝ եթէ
կարող եմ առնել ձեզ զայդ .
ասեն ցնա՝ այո՛ տէր : Յայն-
ժամ մերձեցաւ յաչս նոցա՝
և ասէ . ըստ Հաւատոց ձե-
րոց եղիցի ձեզ : Եւ բացան

աչք նոցա. և սաստեաց նո-
ցա Յիսուս՝ և ասէ. զգոյշ
կացէք՝ մի՛ ոք գիտասցէ:
Եւ նոքա ելեալ համբաւե-
ցին զնա ընդ ամենայն եր-
կիրն ընդ այն: Եւ յելանելն
նոցա աստաքս, ահա մատու-
ցին առնա այր մի՝ համր դի-
ւահար: Եւ յելանել դի-
ւին՝ խօսեցաւ համրն. և
զարմացան ժողովուրդքն՝ և
ասեն. թէ և ոչ երբէք ե-
րեւեցաւ այսպիսի ինչ Յիս-
րայէլի: Իսկ փարիսեցիքն
ասէին, թէ իշխանաւն դի-
ւաց հանէ զդեւս:

ՍՈՒՐԲ ԱԻԵՏԱՐԱՆՑ

ՕՐ Ը.ՕՏ ՄԵՐԿՈՍՔ

Եւ եւ լուր նորա ընդ ա-
մենայն կողմն գաղիլեացւո-
ւոց: Եւ վաղվաղակի եւեալ
'ի ժողովրդենէն , ևկն 'ի
տուն սիմոնի և անդրեայ՝
յակոբայ և յովհաննու
հանդերձ: Եւ զոքանչ սիմո-
նի դնէր ջերմացեալ , և
վաղվաղակի ասեն ցնա վասն
նորա: Եւ մատուցեալ յա-
րոյց գնա՝ կալեալ զձեռա-
նէ նորա . և եթող զնա
տենդն՝ և պաշտէր գնոսա:
Եւ իբրև երեկոյ եղև 'ի

մտանել արեգականն, բե-
րէին առնա զամենայն հի-
ւանդս և դիւահարս, և
էր ամենայն քաղաքն ժո-
ղովեալ առ դրունան: Եւ
թէշկեաց բազում հիւանդս
ի պէս պէս ախտից, և դեւս
բազումս եհան, և ոչ տայր
խօսել դիւացն, զի գիտէին
զնա թէ քրիստոսեան է:

ՍՈՒՐԲ ԱԽԵՏԱՐԱՆՆ

ՈՐ ԲԱՏ Գ.ՈՒԿԱՍՈՒ

Եւ եղև ընդ աւուրան ընդ այնոսիկ եւ՛ի լեառն կայր յաղօթս, և հանէր զդիշերն՝ի գլուխ յաղօթեան աստուծոյ: Եւ երբ եւ այգ եղև՝ կոչեաց զաշակերտան իւր, և ընտրեաց՝ի նոցանէ երկոտասանս զորս և առաքեալս անուանեաց: Որ՝ի մտնէ՝ զոր և պետրաս անուանեաց, և զանդրէաս զեղբայր նորին, և զյակովբոս և զյովհաննէս, և զփիլիպպոս և զբարթուղիմէոս. և

զմատթէոս և զթոմայ, և
զյակովբոս ալփեայ, և զսի-
մոն կոչեցեալն նախան-
ձայոյզ. և զյուդայ յակով-
բայ, և զյուդա իսկարիով-
տացի՝ որ եղև իսկ մատնիչ:
Եւ իջեալ նոքօք հանդերձ
'ի տեղի ժի տաւիտական. և
ժողով աշակերտացն նորա՝
և բազմութիւն յոյժ ժողո-
վրդեանն, յամենայն հրէ-
աստանէ և յերուսաղէմ՝
և յայնմ կողմանէ՝ և 'ի ծո-
վեզերէն տիւրոսի և սիդով-
նի. որ եկին լսել 'ի նմանէ՝
և բժշկել 'ի հիւանդութե-

նէ իւրեանց. և նեղեալքն յայսց պղծոց բժշկէին: Եւ ամենայն ժողովուրդն խնդրէր մերձենալ ՚ի նա, զի զօրութիւն ելանէր ՚ի նմանէ՝ և բժշկէր զամենեսեան:

ՍՈՒՐԲ ԱՒԵՏԱՐԱՆՍ

ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ

(1) Եւ այսորիկ ետես էր Հրէից. և եկն յԵրուսաղէմ: Եւ էր յԵրուսաղէմ ՚ի պրոպատիկէ աւազանին, որ կոչէր եբրայեցերէն բեթ-

հեզգա, հինգ. սրահ: Որա
անկեալ դնէր բազմութիւն
յոյժ հիւանդաց՝ կուրաց
կաղաց գօսացելոց, որ ակն
ունէին ջրոյն յուզելոյ: Եւ
հրեշտակ տեառն իջանէր
ըստ ժամանակի՝ յաւազանն՝
և յուզէր զջուրան. և որ
նախ՝ի ջարժումն ջուրցն ի-
ջանէր՝ ժշկէր, ոչ ումե-
րում նշան հիւանդութեան:
Եւ անդ էր այր մի, որոյ
երեսուն և ութ ամ էր՝ ի
հիւանդութեան իւրում.
Զնա իբրև եհաս յինսուն
զի անկեալ դնէր, և գի-

տաց եթէ բազում ժամանակք են այնուհետև, ասէ ցնա. Կամի՞ս ողջ լինել: Պատասխանի ետ նմա հիւանդն. Տէր՝ ոչ գոք ունիմ, թէ յորժամ ջուրքն յուզիցին՝ արկցէ զիս յաւազանն. և մինչ ես դանդաղիմ, այլ ոք քան զիս յառաջագոյն իջանէ: Ասէ ցնա Յիսուս. արի՛ առ ըզմահիճս քո՝ և գնա: Եւ ողջացաւ այրն, և յարեաւ առ զմահիճս իւր՝ և շրջէր. և էր շաբաթի յաւուրն յայնմիկ:

Պատմութիւն վարուց սրբոյն Կիպրիանոսի եպիսկոպոսին։

Կիպրիանոս էր այր մեծազի ի արնուսական և մեծատուն յոյժ, ուսեալ էր և զամենայն հանճարս իմաստութեան, և հմուտ լեալ մոգութեան՝ որով ամենայն աղանդոց դիտուն էր։ Եւ կոյս աղջիկ ոմն էր՝ի մեծ քաղաքին անտիոքայ՝ անուն Յուստինէ, քրիստոնեայ կրօնիւք՝ դուստր եղեսխաւ ի քրմի կուռց, ուսեալ ըզ հաւատն ի քրեղիոսէ սար-

կաւատիք, և զարձոյց ըզ
ծնօղսն իւր յաստուածգ-
գիտութիւն, և մերոցեան
յոխտառատոսէ եւխոպոսէ:
Ինչ հեմտանոս ումն ազգի-
դոս անուն սիրեայ յոյժ ըզ
յուստիանիա, և կամէր
առնուլ զնա ՚ի կնութեան.
և ջանացեալ բազում պատ-
գամաւորօք և խոստմամբք
և ոչ կարաց հաւանեցուց-
ցանել: Եղեաց առնա յուս-
տիանիա և ասէ, եթէ ես
քրիստոսի եմ հարանացեալ,
և վարդոյ երկրաւորի ոչ
առնուանամ:

Եւ պատահեալ նմա ի ճա-
նապարհին բուռն հարեալ
զնմանէ՝ ոչ կարաց ընդդու-
նել, այլ մանաւանդ անար-
զանօք և ամօթալից դար-
ձոյց ի տուն իւր: Եւ երթեալ առ կիպրիանոս մոգ,
և խոստացաւ առնել նմա երկուս տաղանդս ոսկւոյ և
արծաթոյ՝ եթէ ընդունելոցի զնա ի ձեռն նորա աղջիկ կոյսա-
նիանիա կին:

Եւ կոչեաց կիպրիանոս ի դիշերին յայնմիկ դեւ մի և
արձակեաց առ յուստինա-
նէա. և երթեալ դևն ե-

գիտ զերանելի կոյսն զի ա-
ղօթէր զերրորդ ժամուս գի-
շերոյն: Եւ գիտացեալ ըզ
գալուստ դիւին արար ընդ-
դէմ նորա զնշան խաչին և
փչեաց ՚ի նա. և դևն եր-
կիւղիւ մեծաւ փախստա-
կան եղեալ զնաց առ կիպ-
րիանոս:

Եւ նա առաքեաց այլ դև,
ևնոյնպէս և զնա նշանաւ
խաչին հալածեաց: Եւ ա-
ռաքեաց երրորդ անգամ
այլ դև. և այնպէս դար-
ձաւ երկիւղալից որպէս ՚ի
հրոյ փախուցեալ:

Եւ Կիպրիանոս խոշտանգեաց զդէն՝ և սաստելով նմա Հարցանէր, եթէ էր վասն ինչ եկեալ և ոչ կատարեցին զհրամայեալն: Եւ նորա ասեն, նշան խաչելոյն Յիսուսի ոչ միայն զմեզ հալածէ, այլ եթէ և իշխանն մեր ինքնին գնասցէ ամենայն աներևոյթ զօրօք իւրովք՝ ամօթալից ինախատական լինի ի նմանէ:

Եւ լուեալ Կիպրիանոս առնէ զդևան, և հալածեալ գնաստա ինքեանէ՝ հաւատաց ի քրիստոս. և առեալ զա-

մեծայն զիրս մոգութեան և կախարդանաց հրամայեցեր: Եւ երթեալ առ տուրքն անթիւս եպիսկոպոսն՝ և պատմեաց խոստովանաբար զամենայն զոր ինչ գործեաց մոգութեամբն: Եւ ի մեծի շարաթաթուն մըրկաւեցաւ յեկեղեցւոջն, և յուխերորդ աւուրն եղև ընթերցող, և ի քսան և հինգ օրն եղև կիսասարկաւագ, և յետ չիսուն աւուր եղև սարկաւագ: Եւ յետ տարւոյ մեռ ձեռնադրեցաւ քահանայ, և զվեշտասան

ամ արժանապէս կատա-
րեաց զկարգ քահանայու-
թեան:

Եւ յորժամ հանդեաւ ե-
պիսկոպոսն՝ի քրիստոս՝ նըս-
ուռցին զնա հաւատացեալ-
քըն յաթոռ եպիսկոպոսու-
թեան: Եւ ձեռնադրեաց
զյուստիանիա սարկաւա-
գուհի, և անուանեաց զնա
յուստինիա. և ուսուցա-
նէր և լուսաւորէր զաճե-
նեսեան՝ զհեռաւորս հրո-
վարտակօք, և զմերձաւորս
վարդապետութեամբ:

ՕԹԵԼՕՒՍԾ

ՀՐԱԺԱՐՈՒՄՆ

Հրաժարիմք ի սատանայէ և
յամենայն խաբէութենէն ո-
րա. ի պատրանաց նորա. ի
խորհրդոց նորա. ի գնացից
նորա. ի չար կամաց նորա.
ի չար հրեշտակաց նորա. ի
չար պաշտօնէից նորա. ի չար
կառոյցաց նորա. և յամե-
նայն չար զօրութենէ նորա
հրաժարիմք հրաժարիմք.

Զայս երից կրկնէ՝ երես ի յարևմուտս և ձեռս ի կոր ունելով և ապա գառնայ յաբեղ և սկսանի գգաւանու-Թիւն ուղղափառ հաւատոյ՝ բացատրելոյն . և ձեռնամած երթալ և առնել ։

Խոստովանիմք և հաւատամք

ամենակատար արարչի ։ այսմ Խաչին . անդ անձին և անմահին . այլ և ծնող Արարչին և խոկող ։ որոյն արարչի ։ հաւատամք զՅովհաննէս ։ ասելով՝ անդ . ծնեալ՝ և ձեռնադրեալ ի հօրէ նախ քան զամենայն հաւիտեան ։ Ոչ յեղեալ և

Թիւն մեղաց հաղորդու-
թեամբ սրբոց։
Յառաւտամբ զինն յերից
անձանց զՆոյն Խտուած՝
ծնեալ ի Մօրէ նախ քան
զյաւիտեանս. ի ժամանակի
իջեալ յՈտուածածին կոյ-
սըն Մարիամ. առեալ յա-
րենէ նորա՝ մարմնացընդ
իւրում Խտուածութեանն.
ինն ամաւոյ ժուժկալեալ
յարգանդի անարատ կուսին.
և ելեալ Խտուածն կատա-
րեալ՝ ժարդ կատարեալ.
հոգւով և մտօք և մարմ-
նով. ի անձն. ի դէմ

և միաւորեալ միմեանս՝ ի
Քրիստոսէ ստուածն մարդացեալ ա-
ռանց փոփոխման և առանց
այլայլութեան. անսերմն
յղութիւն և անապական
ծնունդ, որպէսզի է սկիզբն
Քրիստոսութեան նորա՝ և
ոչ վախճան մարդկութեան
նորա։ (Ի Յիսուս Քրիս-
տոս երէկ և այսօր՝ նոյն և
յաւիտեան)։ Եւ առաւել
զՏէրն մեր Յիսուս Քրիս-
տոս շրջեալ ի վերայ երկրի։
Յետ երեսունամաց ելեալ
ի մկրտութիւն։ Այր ի վե-
րուստ վկայեալ՝ Դա է Որդի

ալրելն իմ և հոգին տուր
աղաւնակերպ իջեալ ի վերայ
նորա : Փորձեալ ի սատա-
նայէ և յաղթեալ նմա :
Պարտկեալ մարդկան զիր-
կումբն : Հշխատեալ մարմ-
նով , վաստակեալ , քաղ-
ցեալ և ծարաւեալ : Ելեալ
եկեալ կամաւ ի չարչարան-
խաչեալ և մեռեալ՝ մարմ-
նովն, և կենդանի՝ Յարու-
ծութեանն : Արմինն ե-
դեալ ի գերեզմանի՝ մի-
աւորեալ Յարուածոց-
թեանն. և հոգւովն
իջեալ ի դժոխս՝ անդաժա-

նել Աստուածութեան։
Պարսկաստան հոգւոյն աւե-
րեալ զդժոխս՝ և ապա-
տնալ զհոգիան ։ Յնո-
երից աւուրց յարուցեալ ի
մեռելոց և երևեալ աշակեր-
տացն ։ Ասատամք զՏէրն
մեր Յիսուս Քրիստոս նո-
վին մարմնովն հաստատձեալ
յերկինս և նստեալ ընդ աջմէ
Հօր ։ Նոյն և գալոց է նո-
վին մարմնովն և փառօք հօր
ի դատել զկենդանիս և զմե-
ռեալս ։ Որ և յարութիւն
ամենայն մարդկան ։ Ասա-
տամք և զհատուցումն գոր-

ծոց. արդարոցն կեանք յաւիտենական. և մեղաւորացն տանջանք յաւիտենական:

ՋՂՋՈՒՄՆ

Ա՛ստղայ ամենասուրբ երրորդութեան՝ Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ: Ա՛ստուա՛ծ իմ Հայր, Ա՛ստուա՛ծ իմ Որդի, Ա՛ստուա՛ծ իմ Հոգի, Հոստովանիմ առաջի Ա՛ստուծոյ՝ և սրբուհւոյ Ա՛ստուածածնին՝ և առաջի քո Հայր սուրբ, զամենայն մեղս զոր ես գործեալ եմ: Ա՛նգիտի, մեղայ խորհրդով բանիւ և գործով. կամայ և ակամայ,

գիտութեամբ և անգիտու-
թեամբ, մեղայ Ք. ատուծոյ.
Ա՛ստղայ հոգւոյն և զօրու-
թեամբ սուրբ. մտօքս և
շարժմամբ սորա. ժարմնոյն
և զգայութեամբ սորա:
Ա՛ստղայ կօրութեամբ հո-
գւոյս. խորամանկութեամբ,
անզգամութեամբ, յան-
դգնութեամբ և երկչո-
տութեամբ, շուայլութեամբ
և ժլատութեամբ, զեղ-
ծութեամբ և անիրաւու-
թեամբ, չարահաւանու-
թեամբ, յուսահատու-
թեամբ, և հերհամատու-

թեամբ, մեզայ Ա.ս։
Անեզայ չար խարհրդով մը-
տացս. նենգութեամբ,
ատելութեամբ, խեթիւ,
մախանօք, յաչախանօք,
թուլութեամբ, պոռնկա-
կան խարհրդով արուական,
իգական, անասնական, կր-
պասական, գայլական,
ի գիշերւ և ի տունջեան.
երապական գիճութեամբ,
և անրջական գարշ ապտե-
ղութեամբ, մեղ։
Անեզայ ցանկութեամբ
մարմնոյս. հեշտութեամբ,
պղերգութեամբ, յօրանջ-

մասն քնոյ, շարժութեամբ մարմնոյս, և զարդարութեամբ ի պէս պէս ախտս. հեշտալութեամբ լսելեացս, արատութեամբ աչացս, ցանկութեամբ սրտիս, իզութեամբ ոլնդացս պագշտութեամբ լեռնոյս. անժուժկալութեամբ, շուայտութեամբ, և արբեցութեամբ, մեղայ Ես: Անզայ չարութեամբ լեզուիս. ստախօսութեամբ, սուտ երդմամբ, երդմնապանցութեամբ, հակառակութեամբ, վիճաբանու-

թեամբ, բանասարկուեթեամբ, չոգմոգուեթեամբ, քսու, դատարկաբանուեթեամբ, և ծաղու, կրախօսուեթեամբ, հերձախօսուեթեամբ, և անիծապանուեթեամբ. տըրտընջելու. դժդոհելու. բամբասելու, և հայհոյելու, մեղայ Ք՛ս։

Ա՛ռ զայ գողուեթեամբ ձհուացս. ագահելու, կրկնելու, հարկանելու, սպանանելու, և ընդ գարշաճճելու, մեղայ Ք՛ստուծոյ։

Ա՛ռ զայ ամենայն յօդուածոյ և ամենայն հինուածոյ և ամե-

նայն անդամօք մարմնոյս.
հնգեակ զգայարանօքս, և
վնցեկի շարժմամբս. վերամ-
բարձ ոտնահարութեամբ,
և վայրաքարշ մեղկութեամբ.
յաջ և յահեակ խոտորե-
լով, վատաջնոցն մեղանչե-
լով, և վերջնոցն չարնշա-
ւակ գոլով, մեղայ Ք.ս:
Ք.յլ և մեղայ նօթնից
յանցանօք՝ մահացու մեղօք.
հպարտութեամբ՝ և մասամբ
նորին. նախանձու՝ և մա-
սամբ նորին. բարկութեամբ
և մասամբ նորին. ծուլա-
թեամբ՝ և մասամբ նորին.

ապաշխարեալք՝ և մատակ
նորին. որկրամոլեալք՝
և մատակ նորին. բղջախո-
հեալք՝ և մատակ նո-
րին. Ղեւտ Ա.ս:
Ա.յլ և ՚ղեւտ ամենայն
պատուիրանացն Աստուծոյ.
յանձնառուելեացն և հրա-
ժարելեացն. վասն զի պյանձ-
նառականան կատարելի, և
ոչ ի հրաժարելեացն հե-
ռացայ: Օրինեն ասի՝ և
յերինեայն հեղգացայ. ի
կարգս քրիստոնէութեան
հրաւիրելոյ՝ և գործով
անարժան գտայ. պետքէ

զբարն՝ կամաւ կորացայ, և
ի բարւոց գործոց ես ինձէն
հեռացայ. վայ ինձ, վայ
ինձ, վայ ինձ: Օ՜ն ա-
ւետ, կամ պէտն խոստո-
վանիմ. զի առաքեաց եղ յան-
ցանք իմ. առատեալ են առա-
քինութիւնք իմ, աննա-
պարհ են ցաւք իմ, և առ-
ժամակեալ են վէրք իմ,
ՄԵՂԱՅ Ն:

Ո՜ւր աւուրք զբօսի անհամ
վիճակի հաշտութեան և
բարեխոսաւ միածին Որդին
Աստուծոյ. զի խղճահարու-
թեամբ պատուհասեալ է բեզ,

արձակեսցես զնա ի կապից
ձեռաց իմոց, աղաչեմ զքեզ,

Ս Ր Ք Ա Պ Ո Ւ Մ Ն

Աղաղակեցի քեզ մարդասէրն
Աստուած, և թողութիւն
շնորհեսցէ ամենայն յանցա-
նաց քոց, խոստովանեցեալդ
և մոռացեալդ: Եւ ես
կարգաւս քահանայական իշ-
խանութեամբ, և հրամա-
նաւն Աստուածային թէ՛
զոր արձակիցէք յերկրի,
եղիցի արձակեալ յերկինս:
Այլեւս դանիւն արձակեմ
զքեզ յամենայն մեղանակ-

ցուրթենէ մեղաց քոց. ի խոր-
հըրդոց՝ ի բանից՝ և ի գոր-
ծոց. յանուն Հօր և Որ-
դւոյ և Հոգւոյն սրբոյ:
Ընդ դարձեալ՝ տամ ղքեզ
ի խորհուրդս սուրբ եկեղե-
ցւոյ. զի զոր ինչ գործիս
ցեսս բարիս, եղիցի քեզ ի
բարեգործութիւն և ի փա-
րս հանդերձեալ կենացն,
ամէն:

ԱՂՕԹՔ

ՄԱՆԱՍԷԻ ԹԱԳԱՒՈՐԻՆ

Տէր ամենակալ Աստուած Աբրահամու, Իսահակայ, Յակոբայ և զաւակի նոցա արդարոց. ամենակալ Տէր՝ թող զմեզս իմ:

Որ արարեր զերկինս՝ և զերկիր, և զամենայն զարդ նոցա. ամեն:

Որ կապեցեր զծով բանիւ հրամանի քո. փակեցեր զխորըս, կնքեցեր ահաւոր և փառաւորեալ անուամբ քով սրբով. ամենակալ Տէր:

Ո՛ր ամենայն ինչ սարսի և դողայ յերեսաց ահի զօրութեան քո ամե՛ն։

Ընդաւաւ է մեծ վայելչուԹիւն փառաց սրբութեան քո. սաստիկ է քարկուԹիւն սպառնալեաց քոց ի վերայ մեղաւորաց. անչափ և անքննին են ողորմուԹիւնք աւետեաց քոց. ամենակալ։

Դու էիր յարձրեալ, գլԹած, երկայնամիտ, բազումողորմ. և գղջանաս ի վերայ չարեաց մարդկան. ամենակալ Տէր։

Դու Ընտուած՝ ոչ եղեր

ապաշխարութիւն վասն ար-
դարոցն՝ Աբրահամու, Իսա-
հակայ և Յակոբայ, որք ոչ
մեղան քեզ. ամենակալ:
Այլ եղեր ապաշխարու-
թիւն վասն իմ մեղաւորիս,
զի մեղայ աւելի քան զա-
ւազ ծովու, և բազմացան
անօրէնութիւնք իմ. ամե:
Ճեմ արժանի հայել և տես-
սանել զբարձրութիւնս երկ-
նից ի բազմութենէ անօ-
րէնութեան իմոյ. ամե:
Կորացեալ եմ ես ի բռնու-
թենէ կապանաց երկաթից,
և ոչ գոյ ինձ հանգիստ.
ամենակալ:

Խարկացուցի զսրտմտու-
թիւն, և չար առաջի քո
արարի. կանգնեցի պատկեր
և բազմացուցի զցասուն.
ամենակալ։
Եւ արդ Տէր՝ խոնարհեցու-
ցանեմ զծունր սրտի իմոյ,
և հայցեմ ի քաղցրութենէ
քումմէ. ամենակալ Տէր։
Արեղայ Տէր մեղայ, և կա-
նօրէնութիւնս իմ ես ինձէն
գիտեմ. ամենակալ Տէր։
Ընդեմ և խնդրեմ ի քէն՝
թող ինձ տէր, թող ինձ,
և մի՛ կորուսաներ զիս ըստ
անօրէնութեան իմոյ. ամե։

Ա՛ր յաւիտեան բարկանար
ինձ Տէր, և մի՛ յիշեր ըզ-
ձարիան իմ, և մի՛ պարտա-
ւորեր զիս ընդ իջեալսն ի
ներքոյ երկրի ձարեօք.
ամենակալ։

Օ՛ի դու Աստուած Աստ-
ուած ապաշխարողաց ես,
և յիս ցոյց զբարերարու-
թիւնդ քո, որ անպիժան
եմ. ամե։

Կեցուսցես զիս ըստ բազում
ողորմութեան քում. և ես
օրհնեցից զքեզ զամենայն
աւուրս կենաց իմոց. ամե։

Օ՛քեզ Տէր օրհնեն ամե-

նայն գրուարթութիւնք երկնից.
և քո են միտք յաւիտեան. ամէն:

Փառք Հօր և Որդւոյ և
Հոգւոյն սրբոյ: Այժմ և
միշտ և յաւիտեան յաւի-
տեանց ամէն:

Աղաչեմ և խնդրեմ ի քէն
Տէր, թող ինձ գթել ի մեղս իմ:
Հազուստդարիր տէր, զրա-
գեա ինձ:

Աստուած, քաւեա զիս
զմեղաւորս ի մեղացդ և կենցո:
Արարիչ իմ և յոյս Աստ-
ուած, զթա ի մեղուցեալ
ծառայս, և ողորմեա ինձ
բազմաթեղէս:

Ա՛մենօրհնեալ սրբուհի և միշտ կոյս Ա՛ստուածածին մարիամ, բարեխօսեա առ տէր վասն իմ մեղաւորիս։ Ա՛մենայնսուրբ Ա՛ստուածոյ, բարեխօսեցէք առ Յայր ի յերկինս վասն մեր մեղաւորացս։

Ո՛րիստոս Որդի Ա՛ստուածոյ անօխակալ, ընկալ զաղաչանս մեր, զի ի քեզ են ապաւինեալ անձինք մեր։

Հաղթող զօրութեամբ՝ սուրբ և կենդանարար և պատուական խաչիս քոյոյ պահպանեա զմեզ։

Ընաքեա Տէր զհրեշտակ
խաղաղութեան քո . որ ե-
կեալ պահեսցէ զմեզ անխը-
ռուաւ ի տուէ եւ ի գիշերի :
Եւ մարդասիրութեամբ քո
յիշեա զմեզ տէր , յիշեա
զմեզ յորժամ գաս արքա-
յութեամբ քով , և ողոր-
մեա մեզ :

ՔԱՐՈՋ

Ընկեալքս ի խոստովանու-
թիւն ապաշխարութեան՝
հաւատով զոյս միածնի
որդւոյն Աստուծոյ դիպուք
ի սիրտս մեր . խնդրեալ ի

նմանէ զքաւութիւն և զթո-
ղութիւն յանցանաց մերոց:
Այլ զի նա ինքն է նա-
խանամողն Աստուած յա-
ւիտենական. որ ինքն կամ-
հօր ի տրկեալ զարարածս, և
ասաց՝ զինքն լինել քաւիչ
մեղաւորաց, յոյս ապաշխա-
րողաց. շնորհելով զհան-
դիստ աշխատելոց. ընդու-
նելով զծանրաբեռնեալքս
և զտաժանեալքս մեղօք յա-
պաշխարութիւն քաւու-
թեան: Այլ՝ եկայք ամե-
նեքեան. խոնարհեալ ան-
ձամբք բերկեալ սրտիւք՝

անկցուք և լացցուք առաջի Տեառն արարչին մերոյ. զի անցուսցէ ի մէնջ զցասումն պատուհասի յանցանաց մերոց բարեբարութեամբն իւրով: Ամենակալ Տէր Աստուած մեր՝ կեցո և ողորմեա:

Ա ՂՕԹՔ

Տէր Աստուած վիրկութեան մերոյ՝ որ ողորմածդ ես և դթած՝ երկայնամիտ բազումողորմ և ճշմարտ ի վերայ չարեաց մարդկան. որ ոչ կամիս զմահ մեղաւորին, այլ՝ զդառնալ նորա ի չար ճանապարհէն և զկեանն:

Պաու Տէր՝ առատ ողորմու-
թեամբ քոյ մխիթարեա
զծառայս քո, և տուր սո-
ցատեղի աւպաշխարուեան:
Ւաշտեա մարգասիրու-
թեամբ քոյ. և արա զսոսա
անդամս եկեղեցւոյ քում
սրբոյ: Որպէս զի առող-
ջացեալք հոգւով՝ խոստո-
վանութեամբ և ապաշխա-
րութեամբ մտցեն յեկե-
ղեցի քո սուրբ:
Եւ ընդ ժողովրդեան
քում, քեզ հանցեն զոհ-
նութիւն և զփառս Ւսի և
որդւոյ և Ւոգւոյն սրբոյ
այժմ և միշտ և յաւիտեանս:

ԹԱՐԱԿԱՆՔ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ

Ո՛վ Տէր բազումողորմ խոստովանիմ առ քեզ որպէս զանառակ որդին՝ թող ինձ զմեղս իմ և ողորմեա: Տէր որ գթացար ի կինն քանանացի. գթա և յիս իմ մեղաւորս և ողորմեա: Տէր որ պարծուցեր զմաքսաւորն ի գիտութիւն ճշմարտութեան. պարծո և զիս զմոլորեալս և ողորմեա:

Ա՛ստուած Տէր բազումողորմ
Ա՛ստուած մեղայ ողորմեա:
Ա՛ստուած Տէր և անկանիմ

առաջի քո, մեղայ ողորմեա:
Մեղայ Տէր խոստովանիմ
զյանցանս իմ. մեղայ ո-
ղորմեա:
Մեղաք մինչև յերկինս և
զարդար զցասուցաք քո շար-
ժեցաք ի մեզ. Տէր ըստ
մեծի քում ողորմութեանդ
ողորմեա մեզ: Լուաք մինչ ի
դժոխան ընկղմեալք յանօ-
րէնութեան մերում. Տէր
յիշեա զգինս արեան Ո-
դուոյ քո և ողորմեա: Ա-
լածեա ի մէնջ Տէր նշանաւ
խաչի քո զընդդիմամարտ
և զաներևոյթ դազանն, և

մի՛ տար յապականութիւն
զքո ժառանգութիւնս ։
Ո՛ եղբ իմ բազում են յոյժ
ծանր են քան զաւազ ծո-
վու. քանզի քեզ միայնոյ մե-
ղայ ողորմեաւինձ Ա՛ստուած ։
Բայց Տէր զդուռն ողոր-
մութեան որ ողբալով կար-
դամ առ քեզ. քանզի քեզ
միայնոյ ։
Եղ յիս զգթութիւնդ քո
բազումողորմ և մարդասէր.
քանզի քեզ միա ։
Ողորմեաւինձ Ա՛ստուած՝ զի
քեզ միայնոյ մեղայ ։ Ա՛ռա-
ւել լուացիս ի տղմոյ յան-

ցանայց աղբիւր ժշխու-
թեան և ողորմեա: Յարեն է
իրկեա զիս որ հոգւոց և
մարմնոց ունիս իշխանու-
թիւն և ողոր:

Ա՛աքսաւորն հառաչանօք ի
տաճարին էառ զքաւու-
թիւն. նովին ձայնիւ և ես
գոչեմ ողորմեա ինձ Ա՛ստ-
ուած:

Ա՛ազգակն աղաղակէր ի խա-
չին յիշեա զիս Տէր. նովին:
Ա՛նառակ որդին աղերսանօք
աղաչէր զքեզ՝ ո՛վ մեղայ
յերկինս և առաջի քո. նո-
վին ձայնիւ:

Ընկանիմ առաջի քո և
խնդրեմ զթողութիւն յան-
ցանացիմոց. մի՛ անտես առ-
ներ ՚այր զաղաչանս իմ.
Ընդունակեմ որպէս մաքսա-
ւորն և հեղեմ զարտասուս
իմ առաջի քո որպէս պոր-
նիկն. մի՛ անտես։ Հանե-
րեալ Թշնամւոյն պարտե-
ցայ՝ և ի գաղտնի ներտից
բանսարկուին վիրաւորեցայ։
մի՛ անտես առներ ՚այր զա.
Ընդէր յանցանաց զիս ալէ-
կոծեն. և մեղք իմ բա-
զում զիս յանդիմանեն.
Ընդ զինչ արարից մեղու-

ցեաւլ անձամբս. որ չեմ ապ-
րեալց յահագին հրոյն:
Ա՛ռեալ քեզ Քրիստոս
որդի Աստուծոյ շնորհեա
զիմոզութիւն քազում յան-
ցանաց իմոց:

ՅԱՑԿ

Ա.ՂՕԹՔ Ա.ՌԱՔՕՏԵԱՆ ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ԱՒՈՒՐ 3

„ Հանգստ. ժամուն 35

„ Կիրակի աւուր 103

„ Երկուշ. աւուր 111

„ Երեքշ. աւուր 117

„ Չորեքշ. աւուր 124

„ Հինգշ. աւուր 129

„ Ուրբաթի աւուր 141

„ Շաբաթի աւուր 148

„ Ի գէմ սուրբ Պատարագին 158

„ Նախ քան զՀաղորդութիւնն 222

„ Հետ հղըդուվթե 238
„ Ը. ու հայրն Ը.ծ" 251
„ Ի գէմա որդուց 252
„ Ի գէմա սուրբ հո-
գուն 253
„ Ը. ու տէր Ը.ծ" 254
„ Ը. ու սուրբ խաչն
Քրիստոսի 258
„ Ը. ու սուրբ Ը.ստ-
ուածածինն 261
„ Ը. ու երկնային զօրան 264
„ Ա՛ենտրուպայ վարդա-
պետին վան ճա-
նապարհի 268
„ Հորժամ յորո-
գայթ անկանի ոք,
ասացեալ է սըր-

րոյն Վ֊րիգորի մե֊
րոյ լուսաւորչին
„ Վ֊ասն կապանաց
դիւաց և կախար֊
դաց աղանդաւորաց
„ Ի բանից սրբոյն
Վ֊րիգորի նարե֊
կացւոյ՝ ընդդիմա֊
մարտ դիւաց այս
նուագ աղօթիւկ,
և դիւասպարսուռ
ջերմեռանդագնաց
ախտաւորութեանց
Ի֊ստուծով՝ փա֊
րատիչ
„ Ի֊որին սրբոյն Վ֊ը֊
րիգորի նարեկա֊

ցՀայՔան ՂԱ 284
„ Նորին սրբոյն Գր-
իգորի Նարեկա-
ցՀայ Քան ՂԱ 301
„ Նորին սրբոյն Գր-
իգորի Նարեկա-
ցՀայ Քան ՂԵ 314
Աուրբ Ա.ՀեՔսարանս որ
ըստ Ա՛ատթէոսի 320
Աուրբ Ա.ՀեՔսարանս որ
ըստ Ա՛արկոսի 322
Աուրբ Ա.ՀեՔսարանս որ
ըստ Ղուկասու 324
Աուրբ Ա.ՀեՔսարանս որ
ըստ Յովհաննու 326
Պատմութիւն վարուց
սրբոյն Խրիմեան-

սր եպիսկոպոսին 329
Երաժարումն 337
Օղջումն 344
Երդմակումն 352
Ուղղութք ապաշխարու-
թեան 354
Պարտիզ ապաշխարու-
թեան 361
Ընծութք ապաշխարու-
թեան 363
Հարկանիք ապաշխա-
րութեան 365

